

7(712)
2025

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ●

Հանաչել զիմաստություն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

● Lusarar

Ներսես ՇՆՈՐՀԱԼԻ

ԱՌԱԴՕՏ ԼՈՒՍՈՅ

Մշակուտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեալ:

Բըղխունն ի Զօրէ,
Բըղխեա ի հոգւոյս,
Բան քեզ ի հաճոյս:

Պանծող ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ
Գըտող զիս արա:

Պուռն ողորմութեան,
Ղաւանդիս բաց,
Ղասեցո վերնոցն:

Շիրերակ միութիւն,
Եղելոց խնամող,
Եւ ինձ ողորմեա:

Ձարթիր, Տէր, յօգնել,
Ձարթո ըզթնրեալս,
Ձուարթնոց նըմանիլ:

Էդ Զայր անսկիզբն,
Էակից Որդի,
Է միշտ սուրբ Զօգի:

Ընկալ զիս, զըթած,
Ընկալ, ողորմած,
Ընկալ, մարդասեր:

Թագաւոր փառաց,
Թողութեանց տուող,
Թող ինձ զյանցանս:

Փողովող բարեաց,
Ժողովեա եւ զիս
Ժողովս անդրանկաց:

Ռքէն, Տէր, հայցեն,
Ի մարդասիրել,
Ինձ բժշկութիւն:

Ղեր կեանք մեռելոյս,
Լոյս խաւարելոյս,
Լուծանող ցաւոյս:

Պորհիրդոց գիտող,
Խաւարիս շնորհեա
Խորհուրդ լուսաւոր:

Ծնունդ Զօր ծոցոյ,
Ծածկելոյս ստուերաւ
Ծագեա զլոյս փառաց:

Պենարար փրկիչ,
Կեցո զմեռեալս,
Կանգնեա զգլորեալս:

Հաստեա հաւատով,
Հաստաւեա յուտով,
Հիմնեցո սիրով:

Չայնիս աղաչեն,
Չեռօքս պաղատիմ,
Չիր բարեաց շնորհեա:

Պամպարամբ լուսոյ,
Ղեկավար ճարտար,
Ղօղեալս ամրացո:

Պառագայթ փառաց,

Ճանապարհ ինձ ցոյց,
Ճեպել ի յերկինս:

Միածինդ Զօր,
Մոյծ զիս յառագաստ
Մաքուր հարսանեացդ:

Յորժամ գաս փառօք
Յահագին աւուրն,
Յիշեա զիս, Քրիստոս:

Մորոգող հմութեանց,
Նորոգեա եւ զիս,
Նորոգ զարդարեա:

Շնորհատու բարեաց,
Շնորհեա զքաւութիւն,
Շնորհեա զթողութիւն:

Պարխացո, Տէր,
Ոգւոյս փրկութեամբ,
Ոյր վասն եմ ի սուգ:

Չար մշակողին,
Չար սերմանց նորին
Չորացո զպըտողն:

Պարգեւիչ բարեաց,
Պարգեւեա ինձ
Պարտեացս թողութիւն:

Ձուր շնորհեա աչացս,
Ձերմ հեղուլ զարտօսր,
Ձնջել զյանցանս:

Պետինդ քաղցու,
Ուն հոգւոյս արբո,
Ուսի ցոյց ինձ լուսոյ:

Մեր անուն Յիսուս,
Սիրով քով ճըմլեա,
Սիրտ իմ քարելէն:

Պասըն զըթութեանդ
Վասն ողորմութեանդ,
Վերստին կեցո:

Տենչալոյդ տեսլեամբ
Տուր ինձ յագնեալ,
Տէր Յիսուս Քրիստոս:

Քաբունդ երկնաւոր,
Րոտեա զաշակերտս
Րամից երկնայնոց:

Յօղ արեան քո, Տէր,
Յօղեա ի հոգիս,
Յընծասցէ անձն իմ:

Պիւծեալս մեղօք,
Իիւծեալ աղաչեն,
Իիւսել ինձ բարիս:

Պրկիչ բոլորից,
Փութա զիս փրկել
Փորձութեանց մեղաց:

Քաւիչ յանցանաց,
Քաւեա զօրհնաբանս,
Քեզ երգել զփառս:

Սուրբ Աստուածածնի՛ն
բարեխօսութեամբ.
Յիշեա, Տէր եւ ողորմեա

ԱՐՅԱՆ

Անհավանական թռիչքի ու ոգեշնչման երկիր.

ԱՐՅԱՆ,

Անանց գեղեցկության ու վեհության երկիր.

ԱՐՅԱՆ,

Անսակարկ սիրո ու ջերմության երկիր.

ԱՐՅԱՆ,

Անմնացողով նվիրումի ու անձնագրության երկիր.

ԱՐՅԱՆ

Անկտրում կամքի ու ընդվզման երկիր.

ԱՐՅԱՆ,

Չվերջացող պայքարի ու խիզախման երկիր.

ԱՐՅԱՆ

Հավերժ ապրելու ու անմահանալու երկիր՝

ԱՐՅԱՆ:

(Տես՝ նաև 7-րդ էջը)

ԿԻՍ ԳԱՐԲԻԵԼՅԱՆ

ԽՈՆԱՐՀՈՒՄ՝ ԱՌԱՎՈՏՎԱ ՀԱՆԴԵՊ

Առավոտյան բոլոր ծառերը գլուխները թեքած են լինում դեպի արեւելք: Դու այս խոնարհումը չես տեսնում, իհարկե: Ծառերի կենսածիր ձգտումը մի վիճակ է, երբ առհասույց դրսևորվում են բոլոր կենսասիրական հակումները: Ոչ այնպես, ինչպես մարդը: Մարդը բանական էակ է. հին, դասական ձեւակերպում, որի հետ կարելի է հիմա արդեն համաձայն չլինել: Մարդը բնագոյնով կառավարվող բազմահմար ռոբոտ է: Բայց կգա ժամանակ եւ այս ձեւակերպումն էլ կդառնա դասական: Հնացած բանաձեւումը մարդու հասարակական պատկանելության վերաբերյալ ծնունդ է առել գրասեղանային փիլիսոփայությունից, քանզի այդ փիլիսոփան չի նկատել ծառերի ցայգալուսյան խոնարհումը: Ծառը շարունակական բարձր է, եւ թվացյալ է, եթե ընդգրկում ես նրա ամբողջական բարձրությունը: Դու պիտի ծառը հայացքով բարձրանաս՝ ճյուղ առ ճյուղ, ինչպես երեխա ժամանակ: Տես՝ ամենաբնագոյնիւն էակը մանուկն է, որովհետեւ նա թվացյալ մեծությունների առջեւ չի խոնարհվում: Ինչպես, ասենք, ծառը՝ արեւի առաջ, դու՝ քո շեֆի առաջ: Եվ ի՞նչ է արելը, կամ ի՞նչ է քոշեֆը: Այդ արեւ կոչվածն ընդամենը Արարչի կողմից ստեղծված մի հրաշքն է գունդ է, որին չպիտի ձեռք տալ, այլ պետք է սուկ առնել: Առնչվել՝ չխոնարհվել, հարաբերվել: Հարաբերվելու եւ առնչվելու տարբերությունը հոգեբանական է. այս գույգ բայերի մեջ ուրիշ գանազանություն մի՛ փնտրիր: Ձեռք մի՛ տուր նաեւ Արարչի մյուս արարումներին, միայն առնչվիր դրանց: Ինչպես, ասենք, սիրեցյալիդ ծննդաբերությանը: Ծննդաբերությունն էլ հրաշք է, բայց հրաշքներին չպիտի բնագործեն հավատալ: Հենց հավատացիր՝ դրանք կարժեգրվեն:

Ահա արեւի հոգեբանական բնութագիրը: Բնութագրությունները նրա համար են, որպեսզի ապակողմնորոշեն կանխակալությունը: Իսկ կանխակալությունները նախածնունդ ժառանգություն են. ինչ որ մեկը կասկածանքի բացիլի պես մորդ արգանդի մեջ է ներարկել այդ իրավիճակային զգացողությունը, եւ այն պտղավորվել է քո սաղմի մեջ:

Իսկ ի՞նչ է քոշեֆը կամ, ընդհանրապես՝ շեֆը: Այն ապարարիչյան արգասիք է: Ոչ ոք չեֆ չի արարում: Չի ստեղծում: Նրան, պարզապես, մարդը սարքում է, ինչպես, ասենք, կենտավրներին է հորինել: Մարդն է, չէ՞, նրան ձիուց մարդ դարձրել: Կեն-

տավրն անասուն չէ, բայց միանգամայն տարբեր է, երբ մարդուց վերածվում են անասունի եւ կամ ընդհակառակը: Այս հակադարձության մեջ ամենաուշագրավը, թերեւս, գործընթացի անշրջելիությունն է, որովհետեւ վերադարձը սոսկ ենթադրում է գործողությունն ունյն բանական տիրություն: Ամենահեշտ վերադարձը մոռացումն է, որովհետեւ վերադարձից հետո իրողությունները նույնականանում են՝ միապաղաղության մեջ տարրալուծելով հին ու գալիք հիշողությունները:

Մարդու եւ անասունի համեմատական հոլովություն միշտ էլ ծայրահե-

թաթախության գիտակցումը երկակի զգացում կծնի՝ նողկանք եւ կարոտ: Կնոդկաս կենտավրային ֆանտազիաներից, տարերային կվարգես հազարամյակների միջով, ինչպես՝ թունելի, գտնելու համար ամենափրկիչ Լուսը: Բայց լույսն Արարչի արգասիք է, եւ պիտի առնչվես դրան՝ սոսկ հոգու աչքերով: Կույրը նա չէ, կիսմոզվես, ով չի տեսնում, այլ նա, ով չի գգում: Կգգա՞ս այդքանից հետո լույսի խայտանքը երակներիդ մեջ: Փորձիր:

Նողկանքը՝ հիացքի ծայրահեղ ձեւն է, բոլոր արդարացված նողկանքները հիացքի պարունակ են ու-



Լուսանկարը՝ Վալերի Պետրոսյանի

ղացվել են ձեւակերպումները, մինչդեռ անասունն էլ ունի խոնարհումի իր կերպը՝ էգի հանդեպ արուի գերակայությունը, նույնադաս կենդանու ֆիզիկական մեծության նկատմամբ՝ գիշողականությունը:

Քոշեֆը այս պայմանականություններին չի դասակարգվում, ամենից առաջ՝ բանական ֆանտազիաների անսահմանության պատճառաբանությամբ:

Խոնարհվելու մարմանը, ուրեմն, կենսածիր ձգտում է... Ծառերի խոնարհումն, օրինակ, յուրակերպ է իր աննկատելիությամբ: Կանգնիր առավոտվա դեմ, ցայգալույսի մերկությամբ, եւ կրկնիր ծառերի խոնարհումն արթնացող արեւի առաջ: Չես զգա ճկունը, որովհետեւ ամնկատ խոնարհումի հետ առկա է լինելու նաեւ արագ շտկումը: Խոնարհում-շտկում՝ հարափոփոխ գործողություն, որից վաղորդյան հովի պես թարմ կենսական շնչառության կարիք կզգաս:

Մարդու խոնարհման մեջ դա չես տեսնի, վաղորդյան հաճույքը չես ըմբռնի: Մարդու՝ մեղքերի մեջ ներ-

ցնում: Կապաշխարես դրանով:

Իսկ կարոտը կերբի քեզ առ քո մանկությունը, ուր խոնարհումները միայն կռանալ-վերցնելու նպատակ ունեն: Ուր մշակված բնագոյնի չկան: Ուր ամեն դժկամություն հաղթահարելի է, ինչպես, ասենք, քեզանից մեծերին համոզելը:

Խոնարհումի նողկանքը լոկ դիմակ է, շարտիր այն ու մանկության մարգագետինը մտիր բացերես: Այնտեղ բարձրաբերձ ծառեր չկան, ճկվող-ուղվող երկնուղեշներ չկան: Այնտեղ կենտավրներ չեն վարգում՝ քառատը ու ձիգ ուներով:

Այնտեղ կեցությունը մշտանորոգ արեւածագ է: Ու դու՝ մանուկ, հետաքրքրասեր-ամենը աչքերով. Կլանիր արեւածագի աշխարհիկ լույսը: Ձեռքերդ տարածած ու ժպտերես, որովհետեւ ցայգալույսը Արարչի արարումն է:

Մարդու արարումներին կհաղորդակցվես, երբ այս հրաշք երագից կարթնանաս:

«ԽՐԱՄԱՍՏԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹ» շարքից

ՀՐԱՄԱՅՎԱԾ Է ԱՊՐԵԼ

Հերոսական պատուը նվիրվում է 2020 թվականի հոկտեմբերի վեցին Մարտակերտի շրջանի N141 դիրքի առաջնագծում մարտական արտակարգ հանձնարարության ժամանակ հերոսաբար զոհված, Արցախի հատուկ նշանակության գործողությունների ստորաբաժանման վաշտի հրամանատարի տեղակալ, ավագ լեյտենանտ Հակոբ Ռոստոմյանին և նրա հրամանատարությամբ վաշտի մարտական առաջադրանքը խիզախորեն կատարած նվիրյալ քաջորդներին:



«Կանալ» կոչվող մարտագծի ծախս հեմակետի հատվածում մարտերը չէին դադարում: Թուրքերի առաջապահ ուժերը, երկու անհաջող հարձակումից հետո, չդիմանալով հայկական կողմի հուժկու հակահարվածին, զգուշավոր նահանջում էին՝ թողնելով հայկական դիրքերի ամբողջ երկայնքով շաղ եկած տասնյակ դիակներ ու վիրավորներ:

Ռոստը հեռադիտակով դեռ զննում էր բախման գոտու ողջ երկայնքը, երբ ականջին պայթեց Հոփոյի շնչակտուր ծայրը:

- Դրանց գեները չհավաքե՞նք, հրամանատար, պիտու ա...

- Մի՛ շտապիր, Հովհ... արա՛, սնդիկ հո չէ՞ս... լավ գնեք տարածքը, վիրավոր թուրքը մեկ ա էլի թուրք ա, մեկ էլ տեսար..., ինձ թուրքի մի ավել ավտոմատ պետք չի, Հովհի տղա, ինձ պետք ա, որ անիմաստ զոհ կամ վիրավոր չտամ, հասկացա՞ր,- կարգադրեց Ռոստը ու շարժվեց խրամատի ուղղությամբ:

Նա ամբողջովին լարված էր. շուրջը տարածված վառողի ու գորշ ծխի հոտը պարուրել էր հենց նոր մարտն ավարտած հոգնաբեկ հրամանատարին:

Խրամատի գոգավոր երկայնքով տարածված, աշման բարկ արևից խանձված խոտի դեղին ծղոտները դեռ դադար չէին առել անդադար պայթող ականցների հարվածող ալիքից և տարուբերվում էին ժամապահների օղբ թնդացնող անզուսպ քրքիջից:

- Արա՛, էդ հարիՖի վրա մի մագազին պատրոն վարի տվիր, բա որ Ռոստը իմանա,- Հակոբին խեթեց Համոն:

- Ախպեր, էդ անասունը գլխիս կասկադյոր էր դառել, ոնց կրակում էի՝ աջ ու ձախ էր թռնում: Դու իմ տեղը լինեիր, ի՞նչ կանեիր: Սպա-

սեցի, որ մի քիչ ինքն իրանով հիանա... ու երբ բլուրի կողմից, իրա էլ խելքով, իբր թե աննկատ սկսեց սողալ, կանգնեցի ու... դե, մնացածը տեսաք, էլի:

- Մեկ ա, տրիբունալի հոտ ա գալիս, Հակոբ ջան, մի մագազինով մի թուրք..., չլսված բան ա,- զսպված հեզմանքով Համոն «կարդաց դատավճիռն» ու ծխախոտի հերթական ծուխը կուլ տալով՝ թինկը տվեց խրամատի գոգին:

- Հա՛, հա՛, հա՛... ծիծաղից մեռա, պարոն Համո: Հերիք ա բքես, տուր մի ծուխ էլ ես քաշեմ: Էդ մեկ, մեկ էլ ասա՝ բա դո՞ւ ինչի էիր ըտենց մագ տալով կրակում:

- Ախպեր, էսի սնայպերսկի կարաբին ա, հո ռազատկա՞ չի՝ օպտիկան էլ գլխին դրած: Ես մինչև կրակելը լավ տնտղում եմ ու նոր կրակում, պրիստիժի հարց ա, փուստ տալու իրավունք չունեմ,- պարծենկոտ փիլիսոփայեց Համոն և ծուխը խորը քաշելով՝ ծխախոտը մեկնեց Հակոբին:

- Մարդը տասներկու պատրոնով տասներեք թուրք ա սատկացրել, լավ չի՞,- անթաքույց հեզմանքով խոսքին խառնվեց ավտոմատի փողը մաքրող Արամը:

- Տասներկուսը հասկացա, բա էն մեկի՞ն ոնց բստրեցիր:

- Դե, էն մեկն էլ վախից ա լեղաճաք էղել, Հակոբ ջան,- խոսքը չհասցրեց ավարտել Արամը, և միանգամից պայթեց երեքի անզուսպ հռիռոցը՝ տարածվելով խրամատի ողջ երկայնքով:

«Ռո՛ստ Բագեհին, Ռո՛ստ Բագեհին», ընդհատվող խշշոցի միջից հնչեց հեռակապի ծայրը:

- Ռոստը լսում է, պարոն գնդապետ,- հայացքը հեռացնելով թուրքի այրվող ամենագնացից՝ պատասխանեց Ռոստը:

«Ռոստոմյան ջան, խոսք չունեմ..., հետևում էի, կեցցես, դրանց լավ քարդեցիք»:

- Շնորհակալ եմ, պարոն գնդապետ: Այո՛, տղերքը լավ աշխատեցին, ուրիշ ընտրություն չկար,- աչքը հեռվից չկտրելով՝ Ռոստոմյանը շրջվեց դեպի խրամատը:

«Զոհ, վիրավոր ունե՞ք»,- հեռակապից հնչեց գնդապետի բեկբեկվող ձայնը:

- Երկու վիրավոր ունեմ, պարոն գնդապետ: Ժամկետային զինծառայողներ են, թեթև վերքեր են, վիրակապել ենք..., մեկը նույնիսկ հրաժարվեց բուժկետ գնալ:

«Հա, լավ է, լավ: Դու փորձառու հրամանատար ես, Ռոստոմյան, գիտես, որ էդ անասունները չեն հանգստանա, նոր հարձակում կծեռնարկեն: Պիտի դիմանաք, այլ տարբերակ չկա, օգնական ուժ առայժմ չեմ կարող ուղարկել..., գիտես, որ ձեր դիրքից ներքև՝ ձորի հատվածում, վիճակը շատ ծանր է»:

Հեռակապից հնչող ձայնը երերում էր, բայց հատուկ նշանակության գործողությունների ստորաբաժանման վաշտի դաշտային հրամանատար, ավագ լեյտենանտ Հակոբ Ռոստոմյանը չգիտեր՝ ինչ բան է ընկճվելը և, իրեն հատուկ սառնասրտությամբ, արտաբերեց՝ «Պարոն գնդապետ, մի՛ անհանգստացեք, որքան հարկավոր է՝ կդիմանանք: Դուք տեղյակ եք, որ

իմ վաշտի տղերքը նահանջել չգիտեն:

Կապի մյուս կողմից խորը հեղեղ հնչեց. «Շնորհակալ եմ, տղա՛ս, 141 դիրքի հույսը դո՛ւ ես, Ռոստ ջան... ինչ ասեմ՝ բարի ծառայություն: Կապի վերջը»:

- Շնորհակալ եմ, պարոն գնդապետ, շուտով կհանդիպեմք, կապի վերջը,- անջատելով խոսափող՝ Ռոստը մտավ խրամատ:

- Հրամանատար՝ը,- ֆագոտի եռոտանին հրելով բղավեց Հովհիկն ու ավտոմատը ուսելով՝ պատվի առավ:

- Հրամանատար, վաշտի մարտիկները, թվով...

- Թողնել, ազատ,- հրամանատարը նստեց Նարեկի կողքին, ձեռքը տարավ գրպանն ու ծխախոտի տուփը մեկնեց Հովհիկին:-Արժանի եք, կարող եք ծխել, ես երկու տուփն էլ ուղարկեք խրամատի մյուս տղերքին:

Լռություն տիրեց, տղերքը անխոս ծխում էին: Նրանք զգում էին, որ հրամանատարն էլի բան ունի ասելու:

- Բոլորիդ չեմ կարող գրկել, տղերք, գրկումս չեք տեղավորվի, բայց ասեմ, որ կենտրոնական շտաբում ձեզնով հիացած են... Տղերք, դրանց չպիտի թողնենք առաջ գան, դիրքը պիտի պահենք այնքան ժամանակ, մինչև որ մեր աջ ու ձախ թևերի վիճակը կայունացն: Հարցեր կա՞ն...

- Զէ, ի՞նչ հարց, հրամանատար, ամեն ինչ նորմալ է... Անհասցե թռչող ականի հանկարծակի սուլոցը Նարեկի խոսքը կիսատ թողեց:

- Էն ջահելը ո՞նց ա:

- Եուտո՞մ..., բան չկա, հրամանատար, ասկուկեն մի թեթև ուսն ա տաշել: Մի քիչ վախեցել ա, բայց դուխը տեղն ա:

- Դե լավ ա, Արա՛մ, զգույշ եղեք, տղերք, արխային չընկնեք, դու էլ աչքդ հեռադիտակից չկտրես, Հովհ: Հիմա հանգստացեք, զնամ տեսնեմ մյուսները ոնց են:

Բլուրի կողմից դեռ շարունակվում էին հատուկներ կրակոցները, հրամանատարը մոտեցավ քողարկված ժամապահին:

- Փամփուշտդ կիեքիքի՞, զինվոր, չկանգնես, միշեն ես դառնալու,- նստելով գնդացրորդի կողքին՝ սաստեց հրամանատարը:

- Գիշտ այդպես, պարոն ավագ լեյտենանտ, երկու ցինկ ու երկու մեծ մագազին:

- Հա, լավ ա: Էն ներքևի թումբը տեսնո՞ւմ ես, ծխից՝ աջ:

- Գիշտ այդպես,- հրամանատարի մտերիմ վերաբերմունքից չփոթված պատասխանեց պատանին և ավելացրեց,- կարծեմ դրա ներքևում միմամյոտ կա տեղադրված:

- Ապրես, հոտառությունդ տեղն ա: Ինչքա՞ն ժամանակ ա, որ ծառայում ես:

- Երեք ամիս, պարոն հրամանատար:

- Դիմացի՛ր, լավ կլինի,- զինվորի ուսին մտերմորեն տպապացնելով՝ քայլեց առաջ:

Խրամատի վերջնամասում տեղակայված մարտիկներն իսկույն ոտքի կանգնեցին:

- Զգա՛ստ: Պարոն ավագ լեյտենանտ...

- Թողնել: Հանգիստ ճաշեք, հետո կխոսենք:

- Լավ ոսպով ապուր է, համից չեք կշտանա, հրամանատար, չե՞ք միանա մեզ,- ասաց Կարոն և արագ շարժումով նոր ափսե դուրս բերեց խրամատի թաքստոցից, բայց հանդիպեց հրամանատարի մերժող հայացքին:

- Ես իմ ապուրը կուտեմ էն ժամանակ, երբ բլուրի հետևի բոլոր թուրքերին կմաքենք: Կարոյի ու հրամանատարի լուռ հայացքներն իրար հանդիպեցին: Հա՛, չմոռանամ, ով ծխող չի թող ձեռք բարձրացնի,- կատակի տվեց հրամանատարը: Բոլորը քրքջացին, բացի անկյունում տեղավորված զինվորից, որը մեղավորի պես ձեռքը բարձրացրեց՝ հուսալով տեսնել ընկերների ներողամիտ հայացքները:

- Դա լավ ա, որ չես ծխում, զինվոր, դու ես գժերին մի նայիր, սրանք ես չուրեում վայրենացել եմ, ես կողմերում ինչքան վայրի կենդանի կա, կերել-վերջացրել եմ: Դու քեզ խնայիր, կռվից հետո մեզ առողջ տղերք շատ են պետք գալու, դեռ շատ գործ ունենք անելու,- բոլորի համակրանքին արժանանալով՝ կատակի տվեց հրամանատարը և ի ցույց բոլորի՝ թափահարեց ծխախոտի տուփերը:

- Հայկակա՞մ ա, հրամանատար: Լյովը, իրեն չզսպելով, առաջ ընկավ: «Մեռանք, երկու օր է խոտ ենք ծխում»:

- Ուրեմն ճիշտ ժամանակին եմ եկել, քիթդ մի՛ կախիր, Լյով, պատերազմ է, ամեն ինչ էլ կլինի,- մտերմիկ հորդորեց հրամանատարը՝ ծխախոտի տուփերը հանձնելով Համոյին:

- Դե, որ ըտենց ա, հրամանատար ջան, մի՛ գնա, հոգեպահուստս հանեմ, սուրճի հետ մի լավ բքենք:

- Հոգիդ խորն ա, Մուլզուլու, սուրճից չեմ հրաժարվի, թե չէ համը մոռացել եմ:

- Արա՛, բայց ինչ տիպն ես, երկու օր ա խնդրում ենք, քարի պես չես շարժվում:

- Ամեն ինչ իրա ժամանակին, Կարո՛ ջան, խի հրամանատարին կարա՞մ խնայեմ:

Հրամանատարի սրտովն էր վաշտի տղաների մտերմիկ զրույցները. միմյանց հետ երկար ու արյունալի ճանապարհ էին անցել, և երբեք նա շատ խիստ չէր վերաբերվում տղաներին:

- Կարո՛,- գլխով նշան անելով՝ հրամանատարն առանձնացավ:

- Կարո՛, 141 դիրքի գործերը լավ չեն, թուրքերը ծորով կիսել են ճանապարհն, ու հայոցի ա, թե ինչ ա սպասվում:

- Պարզ է, էլի հույսները մենք ենք,- Կարոն հասկացավ հրամանատարի մտադրությունը:

- Կներես, հրամանատար, բայց հինգերորդ օրն ա, որ կռվի մեջ ենք. տղերքը հոգնել են, փոխարինող չկա...

- Գիտեմ, Կարո՛, ամեն ինչ գիտեմ,- Կարոյի խոսքը կտրեց հրամանատարը,- բայց ուրիշ ելք չկա, տղերքին պիտի օգնության հասնենք:

- Հրամանատար, սուրճը պատրաստ ա,- լսվեց Մուլզուլու Գևոյի բամբ ծայրը:

- Արա դե սպասի, է... իսկ եթե հրետանիով պաղդերժկա անե՞նք,- շարունակեց Կարոն:

- Հրետանին չի աշխատի, կոորդինատները մոտավոր են, բացի այդ, տղերքը մարդուժի պակաս ունեն: Էնպես որ, պիտի անցնենք առաջ, բայց մինչ այդ ես բլուրը պիտի մաքրենք, Կարո՛, որ կարողանանք...

Ականանետի մեկը մյուսին հաջորդող ռումբերը, ուժեղ սուլոցներ արձակելով, պայթեցին խրամատի թիկունքին:

«Մեզմից շուտ սկսեցին շանորդները, բայց ավելի լավ», - խորհեց հրամանատարն ու խրամատ մտնելով՝ արագ հրաման արձակեց:

- Ուրեմն սենց, տղերք, տեսնում եք՝ շաբաթը ուրբաթից շուտ եկավ: Պատրաստվեք, արագ պիտի հարձակվենք, որ էդ անասունները չհասցնեն խելքի գալ: Մուլզուլու, ամեն հիսուն վայրկյանը մեկ՝ մի հատ հրետանու կրակոց՝ բեկորալին, հասկացա՞ր: Գրամատամյոտը իրար հետևից պիտի բլուրի չորս կողմերին խփի: Կարո՛, տասներկու հոգով մենք անցնում ենք գրոհի՝ դիմացից ու շեղ անկյունով: Դրանց քանակը քիչ ա, գիտեմ, դուխ չեն անի բաց դաշտ դուրս գան: Մուլզուլու, սնայպերները հսկում են մեր ճամփան, չնեղանաս, կոֆեն չհասցրեցինք խմել, դու մնացածի հետ պահում ես առաջին գիծն ու խրամատի տարածքը: Հարցեր կա՞ն:

Վաշտի մարտիկների լուռ ու պատրաստակամ հայացքները գոհացրին հրամանատարին:

Երկու ուղղությամբ գրոհող դասակը ականանետների ու ինքնաձիգների տարափի տակ արագորեն առաջ էր անցնում: Շրջանցելով տատասկի չոր ճյուղերով պատված արահետը՝ հրամանատարը միացրեց հեռակապը:

«Մուլզուլու, ի՞նչ եղավ»:

«Ես պատրաստ եմ, հրամանատար», - լսվեց Մուլզուլու Գևոյի ոգևորված ձայնը:

«Էլ ո՞ւմ ես սպասում, կրակ»:

«Ռո՛ստ Բագեհին, Ռո՛ստ Բագեհին», - անընդհատ ձայնում էր հեռակապը:

Ականցների պայթյունի տակ հեռակապի չղաղարող ձայնին կարծես թե անտարբեր հրամանատարն իր տարերքի մեջ էր. մտքում միայն բլուրի հետևում ծվարած թուրքերին ոչնչացնելու վճիռն էր, որ անբեկանելիորեն նրան առաջ էր մղում:

- Ռացիան, հրամանատար,- հեղքը զսպելով՝ Կարոն մոտեցավ հրամանատարին:

- Կարո՛ ջան, գիտեմ ինչ են ուզում, բայց դրա ժամանակը չի: Ձախ թևն անցի, տղերքին ասա՛ իրարից ավելի հեռու լինեն... և ոչ մի կրակոց, մինչև չհրամայեն:

- Լսո՞ւմ եմ, Ռոստ ջան, որ հրամայես՝ լուսին թռնել, իմացի, որ կթռնեմ,- շնչակտուր ծղրտաց Կարոն ու անհետացավ:

Ռազմաճակատի բոլոր հատվածներում ավագ-լեյտենանտ Հակոբ Ռոստոմյանին սպայական

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՕՐԵՐԻՑ

ՀՐԱՄԱՅՎԱԾ Է ԱՊՐԵԼ

կազմի ընկերները նաև «Ռոստ» մականունով էին կոչում: Պատվելի էր, սակայն առաջին դեպքն էր, որ ենթակա զինվորը «համարձակվեց» հրամանատարին «Ռոստ» անունով դիմել: Հրամանատարը չմեղսրտեց, որովհետև դիմելակարգը խախտել էր իր հետ մահ ու կռվի դառնությունը կիսող խիզախ մարտիկը՝ նվիրյալ հայր:

Տեղի տալով հայկական կողմի հեռահար կրակահերթին՝ թուրքերի ակամանետների կրակոցները դադարեցին:

Հեռակապի պայմանական ազդանշանին հենց այդ պահին սպասող Մուզմուզի սևացած շուրթերից հնչեց. «Լսում եմ, հրամանատար»:

«Ապրեք, Մուզմուզ ջան, լավ աշխատեցիք, մի քանի ռոպեից կհասնենք դրանց դիրքերին, սնայպերներիդ ասա՝ ուշադիր լինեն: Հենց կարմիր գույնի հրթիռ արձակեն, իմացիր, որ մտնում ենք, կրակը պետք է դադարեցնել»:

«Լսում եմ», հեռակապի հակառակ կողմից հնչեց զինվորի պատրաստական ծայրը, բայց Ռոստը նույնիսկ չլսեց պատասխանը: Նա համակված էր մարտն ամեն գնով շահելու մեծ պատասխանատվությամբ, որին ընդառաջ էր գնում ինքնամոռաց՝ իր խիզախ քաջերի հետ:

Կարմիր հրթիռն արդեն արձակվել էր, Մուզմուզը կարգադրել էր կրակը դադարեցնել, դիպուկահարները ճողորպող թուրքերի վերջը տվել էին, իսկ Ռոստի տղերքի անակնկալ ներխուժումից ահաբեկված թուրքերի հետ կարճատև մերձամարտն ավարտվել էր հայտնի ելքով: Ու հիմա Մուզմուզը, սրճեփղ պինդ գրկած, զգուշավոր վազքով մոտենում էր բլուրին:

Հրամանատար Ռոստոմյանը գնում էր գրաված տարածքի տեղանքը ու հանկարծ... աչ ու ծախ փռված թուրքերի դիակների մոտ նկատեց դաշտային կարմիր փշածաղկի կոնին իր համգիստը վայելող աշմանային մի բզեզ, որն իր անհոգ, դանդաղ շարժումներով կարծես ապացուցում էր, որ իրեն բոլորովին չի հետաքրքրում մարդկային գազանությունը:

«Ի՜նչ անհույս մոլորության մեջ է մարդկությունը. շարունակ՝ կռիվ, ավեր, արյուն,- այս մտքից սարսափեց մի պահ այլ իրականության մեջ հայտնված հրամանատարը,- ե՛րբ և ինչո՞ւ սպառվեցին համակեցության ու միմյանց հանդուրժելու եղանակները... այս ցավը ըմբռնելի՞ է, արդյոք, զազանային բնագոյով առաջնորդվող թուրք կոչված արարածին, որին հազար անգամ հաշտության ձեռք են մեկնել, սակայն ապարդյուն»:

Վիրակապե՛մ:
- Ի՜նչը,- սթափվեց հրամանատարը:
- Ուսիցդ արյուն է գալիս, հրամանատար:
- Թեթև վերք ա, չեմ էլ զգացել: Դու քո ոտքին նայիր:

- Էս ձեր ուսի արյունն է թռել, ընկեր լեյտենանտ, կողք կողքի էինք վազում:
- Արյունս տո՛ւր, ավագա՛կ,- հրամանատարի անկաշկանդ հումորը Կարոյի սրտովն էր ու հռեռալու պատճառը:
- Մերը նույն արյունն է, Կարո՛, մեկ է՝ մի օր էդ արյունները իրար են միանալու:
- Մուզմուզը սուրճը բերել ա,- Կարոն հրամանատարի բազմիմաստ ակնարկին չցանկացավ ընթացք տալ:

- Հէ, լո՞ւրջ, արա՛, բայց ի՜նչ տիպն ա էդ Գևորը: Դրան որտեղի՞ց ես գտել:
- Ես չեմ գտել, հրամանատար, ինքն ա հայտնվել, մեր կամավորներից ա, տասնվեց թվին էլ ա մասնակցել:
- Հա՛ա, կամավորի հոգին ուրիշ ա: Քայլենք տղերքի մոտ:

Տարածվեց հեռակապի խշշոցը, անհամգիստ ծայրը շարունակ կրկնում էր՝ «Ռո՛ստ Բազեին, Ռո՛ստ Բազեին»:

- Ռոստը լսում է, պարոն գնդապետ,- ծայրեց Ռոստը՝ Կարոյին լռելու նշան անելով:
«Կապին չեք պատասխանում, հրամանատար, անհանգիստ ենք, ի՞նչ վիճակ է ձեր դիրքում»:

- Դե արի, ասա, որ սուրճ ենք խմում,- իրեն հատուկ անմեղ ձևացող դեմքով փսփսաց հենց նոր հայտնված Մուզմուզը՝ հրամանատարին հատկացված սուրճի զինվորական բաժակը փոխանցելով Կարոյին:
- Պարոն գնդապետ, մարտի մեջ էինք, ոչ մի կերպ չէի կարող ձեզ պատասխանել:
«Հեռվից լսում էինք ծայրերը, բայց ոչինչ չէինք կարողանում կռահել. ի՞նչ մարտ, ո՞ր ուղղությամբ»:

- Մեր դիմացի բլուրը մաքրել ենք, պարոն գնդապետ, սպասում ենք նոր հրամանի:
Հեռակապի երկու կողմում ծայրերը լռեցին: Սարքի միալար խշշոցի այդ իմաստը միայն մարտագծի մարտիկներին է հասկանալի. այն լինում է կամ հաղթանակի, կամ զոհված մարտիկի լուրը փոխանցելու դեպքում:
«Բազե՛ Ռոստին, Բազե՛ Ռոստին, ինձ լսո՞ւմ եք, պարոն գնդապետ»:

«Հրամանատար Ռոստոմյան, ուղղակի չգիտեմ ո՞նց արտահայտեմ հիացմունքս, կեցցեք, իմ արծիվներ», վերջապես լսվեց գնդապետի հուզված ու փաղաքուշ ծայրը:
«Ծառայում ենք հայրենիքին, պարոն գնդապետ»:

«Այո՛, պիտի ծառայենք, որդի՛, մինչ հաղթական ավարտ: Ռոստոմյան,- փոքր դադարից հետո շարունակեց գնդապետը,- գիտեմ ինչ վիճակում եք, բայց ուզեմ, թե չուզեմ պիտի տեղեկացնեմ, որ 141 դիրքը գրեթե շրջափակման մեջ է, թուրքերը Բաղերի կողմից մոտենում են այդ դիրքին: Հետախույզների մի վաշտ ենք ուղարկել օգնության, եթե դուք էլ գետի ուղղությամբ մոտենաք, վիճակը կլինի փրկել»:

«Պարոն գնդապետ, տղերքին մեմակ չենք թողնի, շուտով կշարժվենք»:

«Այդպես էլ գիտեի, Ռոստ ջան, միայն թե շտապեք: Քերծի ճանապարհով անցեք, տեղանքին դու ծանոթ ես, ընթացքում կապ տուր», գնդապետի ծայրը Ռոստի պատասխանից հետո ավելի ջերմ էր ու զգացական:

«Լսում եմ, պարոն գնդապետ, թույլ տվեք կապը ընդհատել, պիտի պատրաստվենք»:

«Գործի՛ր, տղա՛ս, հաջողություն ձեզ, կապի վերջը»:

- Հիմա ի՜նչ ենք անելու, հրամանատար,- լռությունը խզեց Գևորը:
- Սուրճ ենք խմելու,- անսպասելի արձագանքեց հրամանատարն ու ոտքի կանգնելով՝ ավելացրեց,- էդ ծխախոտից տվեք մի հատ փորձեն:

Հակորը սուրճն ու ծխախոտի տուփը մեկնեց հրամանատարին, Մուզմուզը երկյուղով փոխանցեց կրակայրիչը՝ հույս ունենալով, որ հրամանատարը չի կատակում:

- Արա՛, էս թույնը ո՞նց եք ծխում, ափսոս չե՞մ ձեր թոքերը,- առաջին ծխի հետ հազալով ոտքի կանգնեց հրամանատարն ու ձեռքն առավ դաշտային պայուսակը:

Արագորեն դուրս բերեց տեղանքի քարտեզն ու խորասուզվեց:

- Էս ի՜նչ ա անում կամանդիրը, ախր ժամանակ չկա,- Հակորի ականջին հնչեց Մուզմուզի ցածր ծայրը:

- Մի՛ խառնվի իրար, կամանդիրը մտածում ա, առաջին անգա՞մն ա,- սաստեց Հակորն ու մոտեցավ հրամանատարին:

- Ուրեմն էսպես, տղերք,- աչքը քարտեզից պոկելով խոսեց հրամանատարը, - գիտեմ, հալումաշ եք եղել, ես էլ՝ ձեզ հետ: Բայց ինքներդ լսեցիք, ուրիշ ելք չկա, տղերքին օգնության պիտի հասնենք: Հարցեր կա՞ն,- սուրճի վերջին կումն անելով՝ եզրափակեց

նա, ու քարտեզը տեղավորեց պայուսակի մեջ:

Որևէ բան ասելու կարիք չկար, ամեն ինչ պարզ էր:

- Գնում ենք Գոմեր դիրքի ուղղությամբ, ավելի կարճ է, համ էլ Քերծի հատվածում տեղանքը բաց է, թիրախ ենք դառնալու: Հը, ի՞նչ կասես, Համո՛:

- Երկու օր ա՛՛ էդ հատվածը խաղաղ ա, հետախուզել ենք, հրամանատար: Բայց ի՞նչ իմանամ, կարող ա սյուրպրիզ միներ լինեն,- բանիմաց հետախույզի նման եզրակացրեց Համոն:

- Տեսնո՞ւմ եք, շտաբում այս մասին կարող են և չիմանալ: Գնդապետը կարծում եմ կների, եթե գործենք ըստ իրադրության: Հիմա կասեմ՝ ինչ ենք անելու: Հա, չմոռանամ, սուրճը լավն էր, Գևոր՛, ապրես, բայց ծխելը թողեք, տղերք, ափսոս եք: Այսպես ուրեմն, բաժանվում ենք հինգ խմբի՝ քառասունից հիսուն մետր բացվածքով: Ուռչե՛կց գնում է իմ խումբը՝ ես, Հովոն, Մարտիկն ու... Աղաս, ի՞նչ կարծիքի ես:

- Բա ո՞նց, ձեզ հետ եմ, հրամանատար,- Աղասը ձգվեց և ընդգծված պատրաստակամությամբ մոտեցավ հրամանատարին:

- Ապրես, հիմա տես ինչ եմ ասում, Աղա՛ս, մեզ շատ փամփուշտներ են պետք, սրանց թողած գրանատները լրիվ վերցնում ենք... հա, Գևոր՛, կապ տուր տղերքին, ասա, որ ոչ մի պատճառով ներքև չիջնեն, ով գիտի, կարող ա իրետանու կարիք ունենանք: Վերջ, տղերք, պատրաստվե՛ք, մի ռոպեից շարժվում ենք:

Հրամանատարը հեռադիտակը ձեռքն առավ, որ մի վերջին անգամ զննի գրոհի ուղին, ու հանկարծ նորից աչքն ընկավ փշածաղկի կոնին բազմած այն նույն բզեզին: «Անողո՛ք աշխարհ, մարդու կերպարանք առած վայրի գազաններ... չեք թողնում անգամ մի բզեզի երջանկության իրավունք ունենալը: Ընկել ենք սար ու ձոր, արմախում գազան ենք զսպում, որ տեսակ ու արժանապատվություն փրկենք»՝ ցավից կծկվեց նրա հոգին:

- Հրամանատար, մենք պատրաստ ենք,- Աղասի բամբ ծայրը ետ բերեց Ռոստին:

- Շատ լավ, շարժվեցինք:

Ակամանետային անդադար ոմբակոծության տակ վաշտի մարտիկները, շրջանցելով զառիթափի՝ փշալարերով պատված հատվածը, արագորեն առաջ էին անցնում:

- Հրամանատար, 111:
Օղային տագնապի ազդանշանը հասավ հրամանատարին:

- Կանգնե՛ք,- ամբողջ ուժով բղավեց հրամանատարն ու ձեռքի պայմանական նշանով հրահանգեց թաքնվել:

Հանկարծակի հայտնված անօդաչու սարքը վաշտի մարտիկների տեղակայված հատվածում լայնակի պտույտ կատարեց և անհետացավ ամպերի մեջ:

- Կարո՞ղ ենք շարժվել, հրամանատար:

- Մի՛ շտապիր, դրանց բլեֆները ես լավ գիտեմ,- Աղասին հանգստացրեց հրամանատարն ու հեռադիտակով փորձեց ամպերի մեջ հայտնաբերել անօդաչու սարքը: Գիշտ այդ պահին նույն կառավարվող սարքը ավելի ցածր բարձրության վրա ևս մի պտույտ գործելով՝ դարձյալ անհետացավ ամպերի մեջ:

«Առաջին երրորդին, առաջին երրորդին»՝ անընդհատ ծայրում էր հեռակապը:

«Առաջինը լսում է, ի՜նչ կա, Դավո՛»:

«Հրամանատար, ասում եմ՝ դրա մեջքին մի երկու հատ չհասցնե՞մ»:

«Տեղներս կբացահայտենք, Դավո՛, բայց դե՛ ժամանակ ենք կորցնում: Լավ, հենց երևաց...», «պեկայով» ես, չե՞ք»:

«Գիշտ այդպես, հրամանատար», հնչեց Դավոյի ծայրը:

141 դիրքի ուղղությամբ հնչող ռումբերի պայթյունների հեռավոր արձագանքները հասնում էին Ռոստի ականջին, ու փորձառու հրամանատարը գիտակցում էր, որ ամեն մի ռոպեի վատնումը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ:

Գնդացրի օդում ճայթող կրակահերթի ծայրը հուսադրեց հրամանատարին, սակայն անօդաչու սարքը դեռ շարունակում էր անվճառ սավառնել:

«Շան որդին փախավ, ո՞նց որ մեզ նկատել են, կամանդիր», հեռակապից հնչեց Դավոյի դժգոհ հոխորտանքը:

«Դե որ նկատել են, Դավո՛ տղա, ես դրա հարցը ուրիշ ձև կլուծեմ: Ուշադիր եղիր, կարող ա էլի քո կողմը գա»:

Կապն ավարտվեց: Թաքստոցից դուրս գալով՝ Ռոստն ուղղահայաց դիրքով կանգնեց դեպի իրեն ընթացող անօդաչու սարքը ու սեղմեց գնդացրի շնիկը: Ջայրույթից շփոթվել էր և նույնիսկ չհասկացավ, թե ինչպես դատարկվեց պահունակը: Բայց Աղասին ուրախ գոչունից հասկացավ ամեն ինչ և դեմքին ժպիտ եկավ:

- Կապ՛վ, կապ՛վ... վա՛յ, կամանդիր ջան, ցա՛վդ տանեմ:

- Լավ, Աղա՛ս, հանգստացիր: Վստահ չեմ, տեսա՛՝ օրորվում էր: Թե որ հետ չեկավ, ուրեմն կպել եմ: Աղա՛ս, կապվիր տղերքի հետ:

- Քո ձեռից բան կալստա՞, հրամանատար, հիմա, էս վայրկյանին:

«Դավո՛, շնորհավորելու ժամանակը չի, ուշանում ենք: Չորրորդ ու հինգերորդ խմբին ասա, որ շարժվում ենք: Վերջ կապին»:

«Լսում եմ, հրամանատար», կարճ պատասխանեց Դավոն ու դուրս գալով թաքստոցից՝ աչ թևի խմբերին պայմանական նշանով փոխանցեց հրամանատարի հրահանգը: Գոմեր դիրքի հատվածը մնացել էր թիկունքում, 141 դիրքից ընդամենը մի ձորակ էր բաժանում, որտեղի լռությունը հրամանատարին դուր չէր գալիս:

- Տղերք, ո՞նց որ մեզ դիմավորողներ կան,- հեռադիտակը իջեցնելով՝ Մարտիկին հրահանգեց թաքնվել ու կապ տվեց երրորդ խմբին:

«Դավո՛, 141-ը քթներիս տակ ա, լսում ես չե՞ մերոնց կրակոցները»:

«Գիշտ այդպես, հրամանատար», հեռակապի մյուս ծայրից արձագանքեց Դավոյի ծայրը:

«Լսիր, թե ինչ եմ ասում, Դավո՛: Ես անասունները գլխի են ընկել կամ էլ են ծիծեռնակը մեզ նկարել ա: Սրանք հաստատ անցել են 141-ի հետևը, որ փակեն մեր ճամփան»:

«Հասկացա, հրամանատար, հիմա ի՞նչ ենք անում»:

«Էստեղից լավ չի երևում, Դավո՛, մի հատ հասկացիր՝ էդ ինչի են դրանք մի գծով գնում ու շուտ կապ տուր ինձ»:

«Գիշտ այդպես, հրամանատար», հեռակապից լսվեց Դավոյի պատրաստակամ ծայրը: Չորակից փչող մեղմօրոր քամին դաշտի չորացած ծղոտները քմահաճորեն այս ու այն կողմ էր ցփնում:

«Մի քսան-քսանհինգ հոգի կլինեն, հրամանատար: Չգիտեմ ինչի, բայց ո՞նց որ պարանից բռնված են գալիս», Դավոյի ծայրը կտրտվում էր, հազիվ էր լսվում, բայց հրամանատարն ամեն ինչ հասկացավ:

«Պարզ ա, Դավո՛, տարածքը մինապատել են ու հիմա պարանի գծով են շարժվում, որ իրենց միների վրա չսատկեն»:

«Այ հիմա հասկացա, հրամանատար, ո՞նց որ հատուկ դեսանտայիններ լինեն, համազգեստը ուրիշ տեսակ ա»:

«Հատուկին հատուկ վերաբերմունք ցույց կտանք, Դավո՛: Ուշադիր լսիր, թե ինչ եմ ասում: Վերջին խմբին փոխանցիր՝ թող կրակոցով ուշադրությունը իրենց վրա վերցնեն ու արագ դիրքը փոխեն: Մենք էս կողմից դրանց հույս կտանք, քո տղերքն էլ՝ դիմացից»:

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՕՐԵՐԻՑ

ՀՐԱՄԱՅՎԱԾ Է ԱՊՐԵԼ

Յ Գործեց հրամանատարի ծրագիրը. ծուղակ պատրաստող թուրք զորահայիններն իրենք ընկան ծուղակի մեջ ու հիմնովին ոչնչացվեցին:

«Եթե սա թուրքի հետնապահ ուժն էր, ուրեմն նոր բախումն անխուսափելի է», - դեռ չէր հասցրել եզրահանգման գալ, երբ սաստիկ գնդակոծում սկսվեց:

Թաքստոցներում դիրքավորված վաշտի մարտիկներին չէր հաջողվում գեթ մեկ պատասխան կրակոց արձակել, ականանետի հարվածներին զուգահեռ գործում էին նաև մեծ տրամաչափի զնդացիրները, որն անհնար էր դարձնում անգամ փոքր ինչ տեղաշարժը: Ինչ որ պահի կրակը դադարեց, հրամանատարը հնարավորություն ստացավ գործելու:

- Տղերք, տեղից չշարժվեք: Ապա կապ տվեց Դավոյին՝ «Ի՞նչ վիճակում եք»:

«Դիմանում ենք, հրամանատար, կարևորը, որ կորուստներ չունենք», - հեռակապի մյուս ծայրից լսվեց Դավոյի խզված ձայնը:

«Լավ ա, Դավո ջան: Սրանք, պրավալից կատաղած՝ մեզ հանգիստ չեն տալու: Ուրեմն էսպես ենք անում. ես իմ խմբով մնում եմ էս դիրքում: Կրակը վերցնում ենք մեզ վրա, տպավորություն ենք ստեղծում, որ վախից ծվարել-մնացել ենք: Դու մյուս խմբերի հետ առաջ ես շարժվում մինապատ հատվածով, հասկացա՞ր»:

«Ծիշտ այդպես, հրամանատար»:

«Շարունակությունը, Դավո...», էդ ուղղությամբ թուրքերը չեն կրակում, գիտեն ինչն ինչոց է: Դրանց կրակոցների ձևից երևում ա, որ իրենց դիրքում երկու միմյուրյոտ կա ու մի քանի ավտոմատավոր ասկյար: Ուշադիր եղեք միներից, դիակների կողքով անցեք, անվտանգ ա: Հա, էն կյաժի անունը ո՞նց էր»:

«Արմենը»:

«Հա, Արմենը, լավ հետախույզ ա, թող առաջից գնա: Հարցեր կա՞ն»:

«Հրամանատար, կներես, բա որ հարձակում եղավ ձեր ուղղությամբ, ախր քիչ եք, է»:

«Դավո, ասածս չի քննարկվում, հիմա կարևորը տղերքին հասնելն ա: Հենց մենք սկսեցինք կրակել, շարժվեք, հասկացա՞ր: Ձորը անցնեք, կապ կտաս... կապի վերջը»:

- Մի քիչ էլ մենք կրակենք, Գևոր, ի՞նչ կասես: Հոգի, թաքստոցից դուրս չենք գալիս, ուղղակի կրակում ենք: Տղերքը շարժվում են դեպի 141, պիտի թուրքերի ուշադրությունը չեղենք:

- Լուսն են, հիմա ընենց մի շուխուռ անեն, որ թուրքերն էլ զարմանան:

- Աղաս, դու միացիր Դավոյի տղերքին, մենք երեքով կմնանք:

Աղասը սրտնեղեց, ուզում էր հակաճառել, որ մնա, բայց հրամանատարի անդրդվելի հայացքը լռեցրեց նրան:

Հովոն թեքվել էր կողքի ու ծանր հեղուկ անընդհատ կրկնում էր՝ ջո՛ւր, ջո՛ւր...

Ձախ ոտքը չէր ենթարկվում, փորձեց արնոտված ծոցագրպանից բիմուր հանել, բայց հասկացավ, որ դժվարանում է, չի ստացվում շարժում անել, կրծքի արյունը լերդացել էր, ներսը այրվում էր ցավից:

«Կենտրոնացիր, Ռո՛ստ, կենտրոնացի՛ր»՝ ինքն իրեն ուժ էր տալիս հրամանատարը:

- Մարտի՛ն, Մարտի՛ն, ո՞ւր ես կորել, ա՛յ տղա:

Մեծ ճիգով թեքվեց ու կաղալով քայլեց Հովոյի և Մարտինի ուղղությամբ: Մարտինը փորձում էր վիրակապել Հովոյին, բայց խոր վերքից հոսող արյունը խանգարում էր:

- Ժգուտ դիր, Մարտի՛ն, ու սրսկի, սրսկի, ասում եմ, մորֆին պայուսակիս մեջ ա:

- Հեն լսում, հրամանատար, չեմ լսում...

Մարտինի արնոտված ականջից հրամանատարը հասկացավ, որ նա ցնցահարվածից խլացել է, ցույց տվեց պայուսակն ու

համրի շարժումներով մի կերպ հասկացրեց ուզածը:

- Ջո՛ւր, ջո՛ւր եմ ուզում,- նվաղ հեղուկ անընդհատ ծայնում էր Հովոն:

Ռոստը ձեռքը մեկնեց ջրամանին, ականի բեկորը պատռել էր այն:

- Մարտի՛ն, արագ ջուր գտիր:

- Բայց հիմա նրան ջուր չի կարելի տալ,- հրամանատարի խոսքը մի կերպ հասկանալով՝ փորձեց հակառակվել Մարտինը:

- Գիտեմ, Մարտի՛ն, գիտեմ, բայց որ ասում եմ, լսիր ինձ: Սպասիր, դո՞ւ ոնց ես:

- Գլուխս դժժում ա, կանցնի, ոնց որ մի քիչ արդեն լսում եմ:

- Հա, կանցնի: Տեսնում ես՝ Հովոյի վիճակը լավ չի, ընկերոջ վերջին ցանկությունը պիտի կատարենք:

- Լսում եմ, հրամանատար, բայց ախր դուք էլ լավ վիճակում չեք:

- Ես ոչինչ, կղիմանամ: Դե, քեզ տեսնեմ Մարտին, շարժվիր:

Մարտինն արագ անհետացավ:

- Հրամանատար,- մորֆին իր դերը կատարել էր, Հովոն փորձում էր նստել:

- Հիմա քեզ չի կարելի շարժվել, Մարտինին ուղարկել եմ, մի քիչ դիմացիր, հիմա ջուր կբերի:

- Հրամանատար, տղերքից ի՞նչ լուր կա, հասա՞ն:

- Հա, բա ոնց, ամեն ինչ լավ ա, մի՛ խոսիր, հանգիստ պառկիր,- ընկերոջը սփոփելու համար ստիպված ստեց, բայց գոհ մնաց իր ասածից՝ Հովոյի թույլ ժպիտը տեսնելով:

- Ուրեմն արժեր դրա համար...

Օղը շամփրող ականների խլացնող պայթյուններն ընդհատեցին բախտակից ընկերների վերջին զրույցը:

Մեքենա կիտված հողի ծանրությունից շուռնջ կտրվում էր, բայց գիտակցությունը տեղն էր: Ուժերի գերազույց լարումով փորձեց ոտքի կանգնել: Հիացողվեց: Որովայնից արյուն էր հոսում: Ինքնաձիգի ծողին հենվելով՝ շրջվեց ու սկսեց դանդաղ սողալ Հովիկի ուղղությամբ: Պայթյունի ալիքը բերանքսիվայր շուռ էր տվել Հովիկի մարմինը, թիկունքի վերքից արյուն էր հոսում: Շրջեց Հովոյին, զննեց:

- Հրամանատար,- Հովիկի կոպերը հանկարծ բացվեցին,- հրամանատար, ես մահանում եմ...

- Ո՛չ, եղբայր, ո՛չ, դու... դու անմահանում ես,- երբևէ իրեն տված ամենադաժան հարցին հրամանատար Ռոստոյանը պատասխանեց մեծ, շատ մեծ դժվարությամբ, ինքն էլ չհասկանալով, թե՛ ինչո՞ւ այդքան շիտակ, այդքան հպարտ:

Ձեռքը տարավ Հովոյի բաց աչքերին ու խոնարհվեց ընկերոջ մարմնին:

Վերքերի ցավերը չէր զգում, մի տեսակ թմբիր էր իջել վրան:

- Հրամանատար,- անսպասելի ծայնից վեր մայեց:

- Նարե՞կ, ինչո՞ւ ես այստեղ:

- Հիմա արագ կգեկուցեմ, բայց վերքերդ կապեմ, հետո:

- Հիմա էլ ոչնչով չես կարող ինձ օգնել, գործից խոսիր:

- Ըլը... ձորի աջ կողմով անցանք, դրանց քթի տակով, հետո մի կես կիլոմետր վազելով՝ հասանք 141 դիրք: Ռացիան խափանվել էր, Դավոն հրահանգեց, որ ինչ գնով էլ լինի՝ հասնեմ ձեզ, սիրտն ամհանգիստ էր:

- Ասա՛... ապրե՛ք, ապրե՛ք, տղերք,- ծայն

նր նվաղեց,- Մարտինն ուշացավ, ջուր եմ ուզում:

- Ջուր ունեմ, հրամանատար: Նարեկն արագ բացեց ջրամանի կափարիչն ու մեկնեց հրամանատարին:

- Օգնիր, չեմ կարողանում, Նարեկ:

Հեռակապի խշշոցը ցնցեց հրամանատարին:

«Հրամանատար ջան, զեկուցում եմ՝ հանձնարարությունը կատարված է: Մեր ռացիան փչացավ, տղերքի կապով եմ խոսում: Թուրքերին հետ ենք շարտել գրողի ծոցը, առաջացել ենք մինչև մեր նախկին խրամատը ու դիրքավորվել ենք», - ցնծում էր Դավոյի ձայնը:

- Հա, Դավո՛ ջան, Նարեկն ամեն ինչ ասաց,- ջանալով խոսքին կայտառություն հաղորդել՝ ծանր հառաչեց, ու կապի վահանակը մեկնելով Նարեկին՝ անծայն հասկացրեց, որ թաքցնի իրողությունը:

«Ինչ եղավ, ծայնդ մի տեսակ է, հրամանատար»:

«Նարեկն ա, Դավո: Հովիկը վիրավոր ա, հրամանատարը վիրակապում ա»:

«Հո ծանր չի՞»:

«Ուրքն ա ու ուսի հատվածը», - աչքը հրամանատարի լուռ հրահանգներից չկտրելով՝ Նարեկն ավելացրեց՝ «Դավո, պիտի օգնեմ հրամանատարին, հետո կկապվենք»:

«Հասկացա, մի քիչ հանգստանանք, ես կկապվեմ: Լավ եղեք, կապի վերջը»:

Հրամանատարի ուժերը վերջնականորեն հատում էին, բայց մի կերպ խոսեց.

- Մի՛ դողա, Նարեկ... որ էսքան ծանփեմ մեռակ անցել ես, ուրեմն քաջ տղա ես: Քեզ մի հանձնարարություն ունեմ, ինչ գնով էլ լինի՝ պիտի կատարես: Պայուսակս բեր, Հովիկի կողքին ա:

Շնչելն արդեն շատ էր դժվարացել, բայց գիտակցությունը տեղն էր:

- Մեզ վրա դեռ կրակում են, Նարեկ, չգիտեմ որ կողմից, ուժ չունեմ, որ զննեմ: Ես պայուսակի մեջ առաջնագծի գլխավոր քարտեզի օրինակն է: Հզորեմ ինչ կլինի, բայց ես քարտեզը աններելի ա, որ թուրքի ձեռքն անցնի, հասկացա՞ր:

- Հասկացա, հրամանատար, բայց ձեզ ես վիճակում ո՞նց թողնեմ:

- Էլ բայց չկա, Նարեկ, սա պատերազմ է, ամեն ինչ էլ պատահում է, կարևորը պատվով դուրս գալն է: Հասկանում ես, չէ՞:

- Ծիշտ այդպես, հրամանատար, պատրաստ եմ հրամանը կատարել,- սրտնեղեց քաջ մարտիկը, սակայն մի կերպ կարողացավ հնչեցնել խոսքերը:

- Ապրես, գինվոր ջան, գրանատոլ տուր ինձ, իմի օղակը սեղմվել ա:

Գզվեցին լուռ: Նարեկը գնաց:

Ծխապատ օղը ճեղքելով՝ միանվագ սուլոցով աչ ու ծախ սուրող գնդակները կարծես փնտրում էին խելահեղ արագությամբ դեպի գետափը վազող շնչակտուր գինվորին:

«Էս ի՞նչ եմ անում, հրամանատարին մեռակ թողեցի, ո՞նց եմ ապրելու սրանից հետո», - տագնապեց գինվորը, բայց գիտեր, հասկանում էր, որ հրաման է կատարում: Ականանետից արձակված արկի պայթյունը ստիպեց կանգ առնել:

Քիչ անց լսվեցին ավտոմատի ընդհատ կրակոցներ: Ձինվորի քրտնաթոր դեմքին թեթև ժպիտ հայտնվեց, հրամանատարի կրակելու ռճին վաղուց էր ծանոթ:

«Ուրեմն դեռ ողջ ես», - անցավ մտքով: Լավ

էր ճանաչում իր հրամանատարին, գիտեր, որ անգամ այդ ծանր վիճակում նա հանձնվող չէ:

Հանկարծ շրջվեց ու խելահեղ արագությամբ ետ վազեց:

- Գալի՛ս եմ, հրամանատար, մի քիչ էլ համբերիր, հրամանատար, հեսա կհասնեմ,- բարձր գոռալով վազում էր գինվորը: Հանկարծ շանթահարվածի պես կանգ առավ:

«Աստված իմ, ախր չեմ կարող, իրավունք չունեմ...»՝ անվճռականությունից գոռում էր ու տեղում դոփում պատանին...

Հիշեց հրամանատարի կարգադրությունը՝ «առաջնագծի դիրքերի քարտեզը հասցնել շտաբ, ոչ մի գնով այն չի կարող թուրքի ձեռքն անցնել»:

Ձեռքը սահեցրեց հրամանատարական դաշտային պայուսակից ներս, շոշափեց քարտեզը ու հասկացավ, որ միայնակ մնացած վիրավոր հրամանատարի հրամանը պարտավոր է կատարել ամեն գնով:

Ընդհատ կրակոցները կրկնվեցին..., գոտեպնդվեց պատանին: Հրամանատարը կարծես այդ կրակոցներով հաստատում էր հրամանի կարևորությունը:

Ձինվորը գետն անցավ ու հենվեց հողաթմբին: Նկատեց, որ ուսից արյուն է հոսում, բայց դա նրան չհուզեց, ոչ մի բանի ժամանակ չկար, պարտքը նրան առաջ էր մղում:

Դիրքերին հասնելու շատ քիչ հատված էր մնացել, երբ լսեց հրամանատարի ավտոմատի խուլ կրակահերթը, ապա..., գրանատի բամբ պայթյունը..., այն գրանատի, որը բաժանումից առաջ իրենից պահանջել էր հրամանատարը, իր հրամանատարը, իր խիզախ ու անձնուրաց հրամանատար Հակոբ Ռոստոյանը:

Գաղտագողի մոտեցող երկու թուրքերին Հակոբը տապալեց, բայց ուժը այլևս չբավեց ավտոմատի շնիկը նորից սեղմելու համար: Որովայնի անասելի ցավից կծկվեց ու աչքերը փակեց: Լսեց շուրջը խմբված թուրքերի հոխորտանքը:

Մի վերջին ճիգով մատն անցկացրեց ու ժանակի օղակի մեջ, ու ձգեց այն:

Լսեց տապալված թուրքերի հառաչները, բայց ինչ-որ խորհրդավոր մի ծայն Հակոբին իր գիրկն էր կանչում..., կարծես անհավանական մի թռիչքով՝ հայտնվեց բազմազույց բզեզների պարսի մեջ, որոնք շրջանաձև պտույտ գործելով՝ բարձրանում էին դեպի երկինք: Ձարմանալի թեթևություն էր զգում, կարծես փակվել էին բոլոր վերքերը, շուրջը լուռ էր, ոչ մի պայթյունի ծայն չէր լսվում: Թափանցիկ երկնքի ծիրից նա նշմարեց Դավիթ ու Արա որդիներին, կնոջը, ծնողներին, որոնք լուռ հետևում էին իր ճախրանքին:

Բզեզների պարսը անդադար վեր էր բարձրանում, ամպերի վարագույրից վեր... Հակոբի հոգին հասկացրեց, որ այլևս անկարող է ետ դառնալ, և իրեն սպասող հարագատներին պատգամեց՝ «ԵՍ ԽԱՎԱՂ ԵՐԿՆՔՈՎ ԵՍ ՎԵՐԱԿԱՐՆԱԼԱՆԻ»:

Նարեկը վստահ էր, որ հրամանատարը պատվարժան կռիվ է տվել, վստահ էր, որ կռվել է մինչև վերջ, բայց միևնույն է՝ սիրտը ցավում էր, ծնվում այն մտքից, որ վերջին պահին հրամանատարի կողքին չի եղել: Գլխահակ և ուժասպառ մարտիկը մոտենում էր խրամատին:

Նա կատարել էր իր հերոս հրամանատարի վերջին հրահանգը:

Նա հպարտ էր, որ այդ կարևորագույն հանձնարարությունը վստահվել էր իրեն: Սփոփիչ մի միտք նրան մխիթարում էր, որ պատերազմում ոչ միայն գոհվում են, այլ նաև պարտավոր են ապրել, որովհետև՝ ՀՐԱՄԱՅՎԱԾ Է ԱՊՐԵԼ:

Սամվել ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԻՄ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ը

Ушу 2.



Սկիզբը՝ նախորդ համարում

Ստեփանակերտում ու հարակից գյուղերը կրկին հրթիռակոծվում էին: Հիվանդանոցի շենքն այնպես էր դողդոլում, որ մենք էլ հետո ներսում տատանվում էինք: Հիվանդներն ու բուժանձնակազմը խառնվել էին իրար: Ապաստարան իջնող մարդիկ վախեցած էին: Բազմաթիվ փորձերից հետո կարողացաք մեր տնային հեռախոսահամարին գանգել ու քրոջս հայտնել, որ հիվանդանոցում ենք, իսկ ինքը թող իջնի շենքի ապաստարան մեր հարեաններին հետ: Ոմանք չգիտեին, թե որտեղ են իրենց երեխաները: Շուրջները վազում էին դպրոցներ ու մանկապարտեզներ՝ վտանգելով սեփական կյանքը: Շատ երեխաներ արդեն դպրոցից տուն ճանապարհին էին եւ պատասխարվելու համար մտել էին տարբեր ապաստարաններ: Կապը խափանումներով էր աշխատում կամ ընդհանրապես չէր աշխատում: Բազմաթիվ մարդիկ չէին կարողանում գտնել իրենց ընտանիքի անդամներին:

Թշնամին մեր դիրքերը հորի-
նակոծում էր առանց դադարի, այն
դիրքերից, որոնք 44-օրյա պատե-
րազմից հետո շատ էին մոտ
գտնվում մեր բնակավայրին: Ամեն
պահի մենք գոհեր էինք ունենում,
ներառյալ քաղաքացիական ան-
ծինք ու երեխաներ: Պատերազմ
առաջին գոհերը երեխաներ էին:
Հուշով հիվանդանոցի ապաստա-
րանը դարձավ վիրահատարան ու
ռեանմացիա, որտեղ չէին դադա-
րում բերել վիրավորների: Բու-
սանձնակազմը հայտնի սուղ մի-
ջոցների ու տազմայի պայմաննե-
րում գերազանց կատարում էր իր
աշխատանքը՝ փրկելով կյանքեր,
օգնելով հիվանդներին: Ցավոք,
կային դեպքեր, երբ արդեն օգնել
անհնար էր. վիրավորների կողքին
տեսնում էիր նաեւ անշնչացած
մարմիններ: Չգիտեինք, թե որքան
կտեւի եւ ինչ ելք կունենա այդ
սիավոր վիճակը, բայց գիտակ-
ցում էինք, որ բուսանձնակազմը չի
կարող ծննդի կառավարել իրավի-
ճակը: Ստեղծված քաոսը մեղմելու
համար միացա օգնություն ցուցա-
բերող մարդկանց: Առանձնացվե-
ցին քաղաքացիական անծինք.
Բժշկական հնտություններ չունեն,
չի կարող բուժական օգնություն
ցույց տալով օգտակար լինել, բայց
օգնում էի հիվանդանոցի ապաս-
տարան տեղափոխված տարեց
մարդկանց, որոնցից ոմանք շարժ-
վելու խնդիր ունեին. պետք էր
պառկեցնել, հոգալ, որ անցուր
չմնան, օգնել այլ հարցերում: Այդ
պատիվներից ու տատիկներից յու-
րաքանչյուրը իմ քանի պատերազմ
էր տեսել: Ոմանք պատերազմում
զավակ էին կորցրել, բայց երբեք

Հէին մտածել Արցախը լքելու մասին: Անգոր վիճակում գտնվելով էլ ոգով Հէին նահանջում, հույս էին տալիս մեզ, որ լավ է կ'ինելու: Իսկ ոմանք Հէին էլ հասկանում, որ կռիվ է սկսվել, եւ թէ ինչու են իրենց բռնկել իջեցրել:

Սեր հրետանին լավ էր աշխատում: Ապաստարանում մարդիկ արդեն գիտեին, թե որ հարվածն է մերը: «Սերունք են, մի վախեցե՛ք», հանգստացնում էին տղամարդիկ, որոնք այդ օրերին հիվանդանոցում բուժվում էին ստանում ու մեանման ստիպված էին իջնել ապաստարան: Ժամերի ընթացքում մտերմացել էինք հիվանդանոցում մեր կողքին գտնվող մարդկանց հետ, կիսվում էինք ինչով կարող էինք, մեկը կիսում էր իր ունեցած հացի վերջին կտորը, մեկը հեռախոսը լիցքավորելու լարն էր տալիս: Իրվանդանոցում հոսանք կար: Յնարավորության դեպքում մոր ինֆորմացիա էինք իմանում, թե որ հասցեներին են խփել, որտեղից են վարավորները բերել: Սարսափելի պատմություններ էին պատմում շրջաններից մազապուրծ եղած ու մի կերպ մեր կողքը հասած հայրենակիցները, որոնցից շատերը կորուստ ունեին: Արդեթջանակա՞ն գինձն ու՞նեմը անմիջապես ոչնչացրել էին քաղաքացիական ենթակառուցվածքները, իրարից կտրել Արցախի չորս շրջաններն իրենց գյուղերով՝ Ստեփանակա՞րտ, Մարտունի, Ասկերան եւ Մարտակերտ: Արգելափակվել էին անգամ գյուղական ու անտառամիջի ճանապարհները, որոնք կարող էին փրկության հնարավորություն տալ քաղաքացիական բնակիչներին: Կտրվել էր կապը Արցախի պաշտպանության բանակի դիրքերի ու բնակավայրերի միջեւ, զինվորականները չէին կարող բնակիչներին տեղեկացնել ադրբեջանական հարձակումների մասին:

Կապի միջոց չկար, բայց լուրերը արագ տարածվում էին հիվանդանոցում: Հեթոթական բոլոր, որ զոհեին ու վիրավորներն կան, վերաբերում էր ՊԲ կարտեր նշանակության այն օբյեկտին, որտեղ որ իմ ճիշտ ենթադրությամբ գտնվում էր Քրթուրն իր ծառայակիցների ու հրամանատարական կազմի հետ: Քարացա, ոչինչ չէի լսում, չէի գգում: Չգիտեմ որքան այդպես մնացի, երբ հանկարծ սթափվեցի անվանս կանչին արծազանքելու: Կանչում էր Քրթուրը: Երան էի նայում ասես հարկություն առած հանգուցյալի: Փոշու, արյան, մրի մեջ համազգեստը չէր երեւում, իսկ դեմքը՝ հազիվ ճանաչելի էր: Մոտեցան, որ գրկեմ, չթողեմ, ասաց վտանգավոր է: Սկզբում չհասկացա, թե ինչ նկատի ունի, բայց մինչ նրա խնդրանքով ուղեկցում էի նրան դեպի վկացարան, պարզաբանվեց, որ իրենց գտնվելու վայրին խփել են հրթիռահրետամային այնպիսի զենքով, որը թունավոր նյութեր է պարունակում ու արծակում: Պետք էր արագ վկացվել: Նկատում էի, որ ոտքը վնասված էր, բայց բեկորային վիրավորման մեման չէր, չթողեց նայել, ասաց բան չկա, դրա ժամանակը չէ: Լվացվելուց հետո պատմեց, որ իրենց օբյեկտից մեկ ուղեծով դուրս էր եկել այդ շրջանում հազիվ գտած ու գնած՝ սովորական ծխախոտին փոխարինող ինքնաշեն թուրունե ծխախոտը ծխելու, ես հենց այդ պահին էի հարկադրվել են կարտեր նշանակություն ունեցող օբյեկտին:

սփռելով ավերածություն ու մահ, տալով վիրավորներ: Մինչ շտապ օգնությունը կհասներ նրանց մոտ, նա վիրավորներ էր դուրս հանել փառապանքից, որտեղ էլ վնասել էր ոտքը եմ ծառայողական ավտոմեքենայով տեղափոխել հիվանդանոց: Իմանալով, որ մենք այնտեղ ենք, եկել էր մեզ տեսնելու, լվացվելու ու նորից արգել գնալու պահանջվող վայր՝ օգնության: Միշտ դեմ եմ եղել ծխելուն՝ համարելով, որ դա դանդաղ մահ է: Կյանքում առաջին անգամ ուրախություն ապրեցի այն համգամանքից, որ իմ ապագա անուսիմը ծնող է, քանի որ ծխելն էր փրկել նրա կյանքը: Մինչ նա լվացվում էր, մայրս էի նրան ու արտասվում, չգիտեմ ուրախությունի՞ց, որ փրկվել է, թե՞ տխուր գիտակցումից, որ գուցե իրար վերջին անգամ ենք տեսնում: Հիվանդանոցից դուրս գալու համար պետք է անցնեիրք լաբիրինթոսի մանավոր երկար միջանցքով, որտեղ արդեն տեղ չկար, իսկ ելքը չէր երևում: Վառողի ու արյան, բժշկական սպիրտի հոտերում պառկած էին վիրավոր տղամները: Արթուրը մոտենում էր, բարեւում էր, հարցնում էր նրանց որպիսիությունը, նրանցից որն էր կարողանում էր խոսել, իրենց ինքնաճած տերմիններով հարցեր էր տալիս, Արթուրից էին ճշտումներ անում, սակայն ի պատասխան հնչում էր՝ լավ բան չկա: Իր ուրույն մտադրական ուղիք անցած յուրաքանչյուր հարց տվող զինվոր, մնացել էր մենակ, սոված ու բզկտված, սպասում էր մի պատասխանի, որ օգնություն կգա: Բոլորս էինք սպասում իրաշքի, օգնության, բայց օգնություն չկար:

Արթուրը հրաժեշտ տվեց ու գնաց: Պատերազմը թեժանում էր, ծայրերը գնալով ավելի ահավոր էին դառնում, իսկ սարսափելի լուրերը շարունակվում էին լսվել հիվանդանոցում: Մթնել էր:

Գիշերվա կեսին հայտարարեցին, որ քաղաքացիական անձինք ու բուժառուները պետք է ազատեն հիվանդանոցը՝ տեղ թողնելով հրատապ բուժօգնության կարիք ունեցողների համար: Խոսակցություններ էլ կային, որ զինված ադրբեջանցիները կարող է ներս թափանցեն ու շրջապատեն հիվանդանոցը: Մենք դուրս եկանք հիվանդանոցի բալ: Մաստիկ մոլո էր: Հայրս արդեն կարող էր մեքենա վարել ու որոշեցինք հորեղբորս հետ միասին մեր բնակարան գնալ: Ավտոմեքենայի լույսերը վառելը վտանգավոր էր, դա կարող էր թիրախավորել մեզ: Ինչեւէ, պետք է լքեինք կանաչ պատուհաններով բոլորին հայտնի շենքը: Տուն, որ երկրորդ ծնունդ էր նվիրել շատ հայերին՝ անցնելով հաղթանակի ու պարտության պատերազմների միջով: Դեռ 1988-ին, երբ Հանրապետական հիվանդանոցը Սարգսյան էր կոչվում, հայերի համար ճակատագրական փորձությունների էին նեթարկվում թե՛ հիվանդանոցը, եւ թե՛ հիվանդները:

Հայրենական մեծ պատերազմի մասնակից պապս վիրավորում ու սրտային իշեմիկ հիվանդություններ. զերմասկան ականամետոի բեկորը մտել էր մարմնի մեջ, սրտի կողքով: Բժշկությունը զարգացած չլինելու պատճառով չի հաջողվել բեկորը մարմնից հանել: 1988թ. փետրվարին ինքնազգացողությունը հերթական անգամ վատանում է: Ասկերանի Դիժբաղ գյուղի

տնից, որտեղ նա ապրում էր, նրան տեղափոխում են Մարգային հիվանդանոց: Այդ ժամանակ հիվանդանոցի գլխավոր բժիշկը ազգությամբ բուլղեր էր: Աղբյուրների բժշկի հանդեպ անվստահություն կար, քանի որ առեղծվածային կերպով վերջին շրջանում շատ հայ հիվանդներ մահանում էին հիվանդանոցում: Մտադախտություն կար, որ նույնը կարող է կատարվել պապիսիետ, հատկապես պայմանավորված փետրվարի 20-ի նստաշրջանի ու պատմական որոշման կայացման պատճառով ստեղծված լարված իրավիճակով: Երբայրներն ու հարազատները որոշեցին բուժումը թողնել կիսատ, փետրվարի 20-ի գիշերը ծածուկ դուրս բերել պապիսի հիվանդանոցից եւ տեղափոխել Ստեփանակերտում բնակվող որդու՝ մեր բնակարան:

Եթե այն ժամանակ մեր բնակարանը համեմատաբար ապահով էր, ապա նույնը չէր կարելի ասել ներկայի համար: Ապահով տեղ չկար:

Անվճար տուն հասանք, քույրս եկավ ապաստարանից, գերադասեցինք մնալ բնակարանում: Ամբողջ գիշեր ահարկու ծայները էին լուծւում: Այնքան ուժգին ու այնքան մոտիկ, որ թվում էր, թե մեր կողքին են: Հասկանում էի, որ ամեն պահ կարող էր լինել մեզ համար վերջինը: Յուրաքանչյուր պայթյուն կարող էր որդես տան, օջախի, ընտանիքի ճրագ մարել: Բոպեներ ու վայրկյաններ էի հաշվում, թե երբ կունսամա, գուցե առավոտը մի քան փոխեր: Անքրև գիշերներն շատ են ունեցել, բայց այդքան մղձավանջային ապրումներ ու ձգձգվող ժամեր դեռ չէր եղել: Սեպտեմբերի 19-ը հիշվեց Արցախյան վերջին մեկօրյա պատերազմի անունով, իսկ ինձ համար իմ սեպտեմբերի 19-ը սարսափի, աղետների, կորուստների մի ողջ դար էր: Արյունոտ, ապերից, մաշաբեր 24 ժամը վերքեր թողեց մեր սրտում, որոնց հետ պետք է ապրենք:

Սեպտեմբերի 20-ին ժամը 13:00-ին հայտարարվեց զինադադար, հետո հայտարարվեց մեր բանակի զինթափության մասին: Արցախի Պաշտպանության բանակի մարտիկները՝ ավելի քան 9 ամիս լինելով կատարյալ շրջափակման մեջ , եւ հակառակորդի օդային ու հրետանային միջոցների կատարյալ գերակայության պայմաններում կրվել են հիսուսաբար: Փառք ու պատիվ նրանց:

Ստեփանակերտի մատույցներում կռիվը շարունակվում էր: Քաղաքի վերելում կրակահերթ էր, թշնամին կրկնում էր հասանում: Միեւնույն ժամանակ մեր հայրենակիցները սկսել էին մեծ ու փոքր խմբերով գալ Արցախի տարբեր տեղերից, գյուղերից ու քաղաքներից՝ ստիպված թողնելով իրենց տներն ու բնակավայրերը, փրկվելով մահացու վտանգից: Նրանցից շատերը տեղավորվել էին որտեղ պատահի՝ հասարակական վայրերի շենքերի միջնամասերում, նկուղներում, մասեղ էին մայթերին ու փաթաթվել վերմակներով, որ պաշտպանվեն անձրեւից, ցրտից: Քաղաքը կերպարամափոխվել էր: Նույն իսկ երկարատև բլուկադային պայմաններում միշտ կոկիկ ու կենսախինդ քաղաքը այժմ ուներ կիսաքանդված, աղբի թափթուկներով լցված՝ գյուղական տեսք: Տեսարանը ակնառու էին դարձնում հրապարակում առանձնացող ձիավորները, ովքեր գյուղերից էին

Եկել ձիրով: Դաժան տեսարան.
Խեղճ մարդիկ սպասում էին իրենց
հերթերին, որ տեղահանվեն:
Նրանցից յուրաքանչյուրին սպա-
սում էր դառն հրաժեշտ իր նախկին
կյանքի հետ, ինչպես որ բոլորիս:

Սեր տանն էի, տաք շորեր էի
առանձնացնում, որ տաննե հրա-
պարակում սպասող մարդկանց
համար, երբ եկավ Արթուրը: Նա
քաղաքացիական հագուստով էր:
Ֆիզիկական վնասվածքների հան-
դեպ անտարբեր էր, բայց հոգեպես՝
հալոմունաշ եղած, տխուր, գլխիկոր:
Ասաց, «-Հորաման կա, որ ազատ
ենք, իսկ ճանապարհը բացվել է,
մարդիկ արդեն գնում են, դուք էլ
պետք է գնաք, ես էլ հետո կմիա-
մամ»:

Շրջափակված, սոված, մենակ, անգնեմ էիմք։ Սեպտեմբերի 25-ին Յայկազգովի բենգինի պահեստի ողբերգալի պայթյունն էլ ավելի ամառաթարացրեց էրճակը։ Գրեթե ամեն տեղից լսվում էր լացի ու սգի ծայներ։ Անտառների ցավ էինք ապրում զոհ ունեցող յուրաքանչյուր օջախ մտնելիս։ Ուժասպառ էինք լինում։ Վերջին դեղորդ օգտագործել էինք, մնացել էր սրտի համար մի քանի հաք, որը պահում էի հորս համար՝ ծայրահեղ դեպքում նրան տալու։ Ուրիշ տարբերակ չկար։ Ընտրեցիմք մի ճանապարհ, որից հետդարձ չկար՝ թողնելով մեր հայրերնիք, մեր հողը, մեր հարազատ տունը, շիրիմները։

ՏՆից դուրս եկանք սեպտեմբերի 26-ին, բայց քաղաքից դուրս գալ այդ օրը չստացվեց։ Մեր փորձիկ քաղաքում երբեք այդքան մեծ ավտոշտարայուն ու խցանում չէր եղել։ Խցանման մեջ կանգնած հալածական զգացմունքներ ունեի, մի կողմից ուրախ էի, որ մի քիչ էլ ենք Արցախում մնում, մյուս կողմից էլ ամհամբեր սպասում էի, որ շուտով հասնենք Յակարի կամրջին, պրոնենք դժոխքից ու բուժմամբ զբաղվենք։ Ստեփանակերտում անցնալից անց կամրջի ժամերը Սուրբ Աստվածամոր հովանու մայր տաճարի մերձակայքում էր, խցանման մեջ։ Մինչ մենք մեր քաղաքի հետ հրաժեշտի դառը պահերն էինք ապրում, ռուս խաղաղապահների ՄՍՄ-ի ուղեկցությամբ քաղաք էին մտնում և արդեն խցանական զինված զորքեր։ Դա կեղծն էր։

Երկար ու տանջալից ժամեր հետո անցանք Հակարին: Ինչքան հեռանում էինք Ստեփանակերտից, այնքան ծանրանում էր հոգիս: Երեւանում մեզ ընդունեցին մեր ըն-
կերները: Որոշ գափով ուշքի պա-
լուց հետո կազմակերպվեց հորս
վիրահատությունը Նորք-Մարաշ-
ում: Արթուրը մեզ հետ էր, սակայն
ամիսներ էին պետք, որ այդքան
ապուշլուց հետո կարողանայինք
ստանալույթան մասին մտածել:
Սկսվել էր դատարկության, կարո-
տի, ցավի, անարդարության, ան-
հայրենիքության զգացումը: Թե-
պետ այլևս ֆիզիկապես հյուսված
չէիք, բայց ասես մեր հոգին ու սիր-
տը թողել ենք մեր լեռներում, մեր
տներում, մեր Արգախում:


Հավատանք, որ կատարվածին արժանի գնահատական տրվելու է, վերադարձ լինելու է ու մեր գավակների արդար արյունով շահախված հողում դեռ խաղաղ ապրելու ու արարելու ենք:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՃՆՈՐՀԱՆԴԵՍ

«ՊԱՅՔԱՐ»։ ԳԻՐՔ՝ ԾՆԱԾ ՅԱՎԻՑ ՈՒ ՏԱՌԱՊԱՆՔԻՑ

*Մենք ապրում ենք այնպիսի
ժամանակներում,
երբ արժեք են ներկայացնում միայն
մարտնչողները.
նույնիսկ անհուսության մեջ պայքարը
մնում է որպես հույս:
Պայքարի մեջ են ծնվում մեծ
արժեքներն ու մեծ մարդիկ:
Սոնա Ղահրամանյան*



« Ո՞վ
կարող էր
մտածել, որ
ա յ ս
փ խ ր ու լ ն
ա դ ջ ի կ ը
այս տարի-
քում գրքե-
րի հեղի-
նակ կարող
էր դառնալ՝
այն էլ մար-
դու կողմից

ստեղծված ամենացավոտ թեմայի՝ պատե-
րագմի մասին: Չնայած վերնագրված է
«Պայքար», բայց այս գրքի մեջ այնքա՛ն
խաղաղություն կա...»,- այս խոսքերով է
Սոնային՝ գրքի հեղինակին, ներկայացնում
պատվելի Գևորգ եղբայրը ԱՅԱԸ Երևանի
գրասենյակի Հայ Ավետարանական եկեղե-
ցու դահլիճում կայացած Պաշտամունքի
արարողությունից հետո:

Հիշում եմ՝ 2021 թվականն էր. ես աշ-
խատում էի Ասկերանի միջնակարգ դպրո-
ցում: Դպրոցի դահլիճում տեղի ունեցավ
դեռահաս աղջկա առաջին գրքի շնորհա-
դեսը՝ «Կյանք՝ կյանքի դիմաց»: Տեսա, թե
ինչքան էր ոգևորված Սոնան այդ հաջողու-
թյունից: Հաջորդ օրը իմ նախաձեռնու-
թյամբ կայացավ մեր հանդիպումը: Խոր-
հուրդ տվեցի նրան՝ երբեք չհանգստանալ
դափնիների վրա ու շարունակել մաքառու-
մը՝ նորանոր բարձունքներ նվաճելու հա-
մար: Նա սիրով ընդունեց խորհուրդներս,
պայքարեց, ու այդ պայքարից ծնվեց
«Պայքար»-ը՝ երկրորդ գիրքը: Ինչպես Սո-
նան է խոստովանում, երբեք չնռագավ
այն ժամանակ տվածս խորհուրդը, որն իր
համար չափազանց կարևոր էր ու անհրա-
ժեշտ: Պատահական չէր, որ երկրորդ գրքի
շնորհանդեսին ինձ էլ էր հրավեր ուղարկել՝
կիսելու իր ուրախությունը և նվիրելու
«Պայքար»-ը:

Այսօր նա երախտապարտ է Աստծուն՝
իրեն պարգևած շնորհի համար: Ամեն ան-
գամ, երբ գրիչը ձեռքն է առնում ու իր
մտքերը բարձրաձայնելու անկարողությու-
նից դրդված ճերմակ թղթերին է հանձնում
դրանք, թեթևանում է հոգին ու փրկվում իրեն
աշխարհով մեկ գոռալուց: Գրել Արցախի
մասին նրա կորստից հետո ծանր է ու
դժվար: Ամեն մի տողում, ամեն մի բառում
ծպտված մի կարոտ կա՝ անչափելի ու
խեղդող, որ ուղեկցում է նրան քուն թե ար-

թուն: Գիրքը, սակայն, միայն կարոտի մա-
սին չէ. այն կյանքի, պայքարի, սիրելու ու
սիրվելու, ներելու, երախտապարտ լինելու
և, վերջապես, ապրելու ու հավատալու մա-
սին է: Նրա հերոսները սովորական կեր-
պարներ չեն. նրանք մահվան աչքերի մեջ
նայած, մարդկային դաժանությունից ու
անարդարությունից վիրավորված ու հոգ-
նած անհատներ են, որոնք ապրել են ցան-
կանում և ապացուցում են, որ աշխարհում
ապրելուց քաղցր բան չկա: Նրանք ապա-
ցուցում են, որ կյանքի ամենադժվար պայ-
մաններում անգամ մարդ կարող է արարե-
լու ելք գտնել, եթե չմոռանա լույսի գոյու-
թյան մասին, Աստծո մասին...

Երիտասարդ հեղինակը իր հերոսների
միջոցով փորձել է վկայել, որ նույնիսկ
ամենամարդաբույր մրցակցության պայման-
ներում, նույնիսկ պատերազմի ճիրաննե-
րում պետք է շարունակել պայքարել ու
չվիատվել, չնայած շատ մարդիկ կեսից
համձնվեցին, շատերը չունեին այդ հնա-
րավորությունը, շատերն էլ դեռ պայքարը
չսկսած տանուլ տվեցին: Նա համոզված է,
որ մենք ունենք պայքարելու և հաղթելու
հնարավորությունը, զգում է, որ իր վիրա-

որոնք շնորհավորեցին նրան նոր գրքի
լույսընծայման առթիվ և նորանոր հաջո-
ղություններ մաղթեցին նրան հետագա



ստեղծագործական կյանքում:

Սոնայի մայրը՝ Անահիտ Դանիելյանը,
իր երախտագիտությունը հայտնեց Ասկե-
րանի Էդմոն Բարսեղյանի անվան միջնա-
կարգ դպրոցի մանկավարժական կոլեկ-
տիվին՝ Սոնային փայլուն գիտելիքներ փո-
խանցելու, նրա երազանքների իրագործ-
մանն ուղեկից լինելու համար: Աղջկա այդ



վոր սիրտը նորից բաբախում է, և Արցախը
իր մեջ ապրում է:

«Ուզում եմ հորդորել բոլորիդ, որ պար-
զապես ապրեք,- ասում է Սոնա Ղահրա-
մանյանը,- ապրեք ու վայելեք այն գեղեցիկ
հնարավորությունը, որ Աստված շնորհել է
ձեզ: Իսկ եթե դժվարանաք, պարզապես
հիշեցեք, որ Արցախում մի փոքրիկ կար, որ
պատերազմում կորցրել էր հորը, որ բախ-
վել էր անարդարությանը, որ գիշերը հացի
հերթում էր կանգնում ու վերջում դատար-
կաձեռն տուն վերադառնում, ով տեսել էր
ընկերների մահը ու հետո էլ կորցրել իր
տունուտեղը, բայց սովորել է նորից
ժպտալ, ապրել ու հավատալ, որ Աստծո
կամքը կլինի ինչպես երկնքում, այնպես էլ
երկրի վրա...»:

Շնորհանդեսին Սոնան հրավիրել էր
նաև Ասկերանի միջնակարգ դպրոցի հա-
րազատ մանկավարժներին, տնօրեն Մա-
րիելա Ավանեսյանին, իր առաջին ուսուց-
չուհի Էլմիրա Եղյանին, գրքի խմբագիր, իր
մայրենիի ուսուցչուհի Սիլվա Ջհանգիրյա-
նին, անգլերենի ուսուցչուհի Ինգա Զա-
քարյանին, ընկերներին ու բարեկամներին,

հաջողությունը նա համարում է բոլորինը:
Թող Աստված ուժ, իմաստություն և խաղա-
ղություն պարգևի մեր ժողովրդին:

Գրքի խմբագիր Սիլվա Ջհանգիրյանը,
շնորհավորելով իր սանին, ընդգծեց, որ
«Պայքար» գրքի գլխավոր հերոսը բարո-
յականությունն է, մաքրությունը, հավատը,
պայքարը, կարոտը, հույսը: Գրքում ներկա-
յացվածը մի ընտանիքի կյանքի պատմու-
թյունն է, որն ամբողջությամբ պայքար է,
արժանապատիվ պայքար՝ հայրենի հողի
ազատության, անկախության համար, որն
իր մեջ ամփոփում է արցախյան հայրուրա-
վոր ընտանիքների կյանքի պատմությունը:
«Հեղինակը,- հավելում է խմբագիրը,- ար-
ցախյան մի ամբողջ աշխարհ է նվիրում ըն-
թերցողին՝ արցախյան իմաստ, գույներ,
բարբառ, և նրա որդիական սիրտը տրո-
փում է հայրենի եզերքի ու այդ եզերքում
ապրող, այդ հողը պահող մարդկանց հա-
մար: Սրտի տրոփը լսվում է ամեն բառի,
ամեն տողի մեջ: Այդ տրոփն իր մեջ ներա-
ռում է և՛ զայրույթ, և՛ հորդոր, և՛ կոչնակ, և՛
զգաստություն, և՛ կորցնելու վախ: Գիրքը
ցաված սրտի, ցաված մտքի ճիչ է, բողոք՝

անարդար, անիրավ աշխարհին: Պարզ
ճշմարտություն է՝ հայրենիքից դուրս եր-
ջանկություն չկա: Ցավի, կորստի, կարոտի
մեջ հերոսները լավատես են և ապրում են
Ետդարձի հույսով:

Մի օր հրաշք կլինի, հայի հրաշքը. մենք
պետք է տուն դառնանք, պետք է հետ բե-
րենք այն, ինչը բոլոր օրերս ցնցելով մերն է:
Բարով ես եկել, «Պայքար», թող քո ծնուն-
դը նորանոր հանդիպումների առիթ դառ-
նա...»:

Սոնան հոգու բոլոր թելերով կապված է
Արցախին. կարոտը, թախիծը, տրտմությու-
նը միահյուսված են նրա տողերում. «...
Արդեն որերորդ տարին է՝ Արցախում
աշունն այլևս գեղեցիկ չէ: Արցախում աշու-
նը միայն կորուստ է բերում՝ 2020 թվակա-
նից սկսած: Կարծես ամեն անգամ, երբ ծա-
ռից մի տերև է ընկնում, պետք է մի քաջա-
սիրտ զինվոր էլ ընկնի: Մայրերը արդեն
սարսափում են այդ եղանակից: Սակայն,
հաստատ, ո՛չ հերոս տղաները, որոնք
արիաբար կանգնել են սահմանին ու պատ-
րաստ են իրենց հայրենիքը ամեն գնով
պաշտպանել...»

Ընտանիքի սյան կորուստը Հարութնեց
համար այնքան էր մեծ, որ ընտանիքը հու-
սահատ հեռացավ Արցախից, սակայն նրա-
նից հեռու մնալ չկարողացավ: Տարիներ
հետո նրանք նորից եկան ու հաստատվե-
ցին Ասկերանում՝ հարազատ Հաղորթից
հեռու մի վայրում, որտեղ ոչինչ Հաղորթի
նման չէր, բայց փոխարենը հայրենիքում
էին: Հայրենիքի լավն էլ դա է...

Ցավոք, հայ երիտասարդի համար բա-
նակը միայն ֆիզիկական աշխատանքի
վայր չէ, որտեղ տղային սովորեցնում են
տղամարդ դառնալ: Այն փորձվելու և ուժեղ
մնալու վայր է: Տառապելու ու չկոտրվելու
վայր է: Երազելու և ընկերոջ կիսատ մնա-
ցած երազը ամուր պահելու վայր է: Բանա-
կը տղայի կյանքի ամենալուսավոր և
միևնույն ժամանակ ամենադաժան ժամա-
նակահատվածից մեկն է...

Հովդի գանգը շատ անսպասելի
կտրվեց, իսկ Արցախում կիսատ մնացած
գանգը ոչ մի լավ բանի խորհրդանիշ չէ:
Հասմիկը հասցրել է սոցիալական բոլոր
հարթակները թերթել. սահմանին տիրող
լարվածության մասին լուր չկար...»:

Սոնայի համար ծանր է, երբ «կյանքը
բաժանվում է՝ մինչև պատերազմը ու հե-
տո...

Երբ խոսում ես նրա մասին, ինչ գրելը
ցավոտ է, բայց լռելը անհնար...»:

Սոնա Ղահրամանյանը այժմ ուսանում է
ԵՊՀ-ի ռոմանագերմանական ֆակուլտե-
տի անգլերեն-ֆրանսերեն բաժնում:

Աստված տա՝ Սոնայի հաջորդ գիրքը
ծնվի ոչ թե ցավի ու տառապանքի միջից,
այլ ողողված լինի հաղթության բերկրանքի
լուսապայծառ շողերով:

Սուրբյա ՂԱԶԱՐՅԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐՁԱՆ

ԼԱՎ ՕՐԵՐԸ ՆԵՏ ԿԳԱՆ

2020թ. Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում հայաթափ եղավ Արցախի Հանրության շրջանը, և հաղորդվեցին բնակություն հաստատեցին ՀՀ տարբեր մարզերում, Երևանում: 2021թ. մարտի 1-ից Երևանում սկսեց գործել «Դիզակ Արտ» մշակութային կենտրոնը, որի խնդիրն է պահպանել Արցախյան մշակույթը, սովորությունները, ավանդույթները, հայրենիքի հուշը: Վերջերս Կենտրոնի երգարվեստի խմբի սաները փայլուն կատարումներով են հանդես եկել միջազգային բեմերում և վերադարձել տուն առաջին մրցանակներով: Հուլիսի 4-ին «Դիզակ Արտ»-ը Երևանում Հայաստանի երգի պետական թատրոնի դահլիճում, ներկայացրեց «Արվեստի ճամփորդները» համերգային ծրագիրը: Մինչ համերգի սկսելը՝ «Դիզակ Արտ»-ի տնօրենության կողմից հնչեց շնորհակալական խոսք իրենց աջակցողների և համագործակցողների հասցեին, ինչպես նաև Հայաստանի երգի պետական թատրոնի անձնակազմին՝ տնօրեն Մանե Գրիգորյանի գլխավորությամբ: Կարևորվեց կենտրոնի ուսուցիչներ Անուշ Ստեփանյանի, Ռուզաննա Վարդանյանի և Գոհար Ալեքսանյանի նվիրումը, որ իրենց սաները հանդես են գալիս արդեն որպես արհեստավար երգիչներ: Բեմում էին կենտրոնի նույն երգիչ-սաները, որոնք արտերկրից իրենց հետ բերել էին արվեստի ուժը, հաղթանակի ծայներն ու հպարտու-



թյունը: Յոթ շնորհալի արդեն երիտասարդներ՝ Սերգեյ Արզումանյան, Իրինա Մկրտչյան, Արման Հայրիյան, Կարինե Ղուկասյան, Անահիտ Արզումանյան, Գևորգ Ստեփանյան, Աննա Շաբուրյան, որոնք ծնվել ու հասակ էին առնում Արցախի Հանրության շրջանում, սակայն տեսան պատերազմի սարսափը և հեռացան հայրենի տնից՝ այնտեղ թողնելով մանկության հուշերը, արդեն երգիչ են ու հանդիսատեսին հիացնում են իրենց կատարումներով: Այսօր նրանց սրտում ապրում է Արցախը որպես հիշողություն և վերադարձի անմար կանթեղ: Իսկ «Դիզակ Արտ»-ի գործունեության նպատակն է գործել, արարել՝ տունդարձի հավատով: Համերգին ներկա էին «Դիզակ Արտ»-ի գործադիր տնօրեն Երազիկ Հայրիյան-Ավանեսյանը, որը մինչ պատերազմն աշխատում էր Հանրության շրջվարչակազմի

աշխատակազմի մշակույթի բաժնի վարիչ, հիմնադիրներից Գայանե Բուդաղյանը, Արցախի ԿԳՄՍ նախկին նախարար Լուսինե Ղարախանյանը, հյուրեր, ծնողներ, կենտրոնի ուսուցիչներ: Հաղորդավարը ներկայացրեց երգիչներին, որոնք բեմում հանդես եկան առանձին-առանձին՝ կատարելով հայ և արտերկրի ժամանակակից երգահանների երգեր: Առաջինը «Ղարաբաղ՝ իմ չքնաղ» երգով, որի հեղինակն է երջանկահիշատակ Արթուր Գրիգորյանը, հանդես եկավ Հանրության Տունի գյուղում ծնված Սերգեյ Արզումանյանը, որի երազանքն է երգիչ-դերասան դառնալ: Իսկ Հանրութ քաղաքում ծնված Արման Հայրիյանի երազանքն է աշխարհահռչակ երգիչ դառնալ ու մի օր էլ Հանրության հրապարակում երգել: Արմանը սիրում է խոսել հայրենի բարբառով ու սիրով կատարեց Արթուր Գրիգորյանի «Հայ իմ աշխարհ» երգը: Հանրության մեկիքանիստ Տող գյուղում ծնված Աննա Շաբուրյանը նույնպես նպատակ ունի ծանաչված երգիչ դառնալ: Տարբեր մրցույթների մասնակից ու հաղթող է և համերգի ընթացքում կատարեց Ադելի երգերից: Համերգի վերջում միասին կատարեցին Ավետ Բարսեղյանի խոսքերով և Կարեն Սևակի երաժշտությամբ գրված «Լավ օրերը հետ կգան» երգը, որը նաև տունդարձի հավատ է ներշնչում: «Լավ օրերը հետ կգան, և մարդիկ նորից ծեռքով բարև կտան...»

Ի ԽՈՐՈՋ ՄՐՏԻ...



Վերջին առնվազն երկու տասնամյակներին Արցախի այսպիսի լավագույն կերպավորոցն էր: Գեղեցիկ այս էր ոչ միայն արտաքին տեսքով, այլև արցախյան բարբառի ճոխ վերարտադրությամբ, ավանդական շարժումների անթերի մատուցմամբ, ինչը նահապետական շուք էր տալիս նրան: Քանի՜ բեմերից է հնչել նրա արցախական երգը, հարսանիքներին քանի՜ երիտասարդ զույգերի է այսպիսի օրհնամբ տվել... Անահիտ Հովսեփյանին շատերն էին ծանաչում, և ամեն մեկի մոտ նա հարգանքի ու հիացմունքի նշխար ուներ: Անշուշտ, Անահիտ-այսպիսի կարիքը երկար ժամանակ մենք դեռ կզգանք, որովհետև նրա կերպարի մեջ Արցախն էինք տեսնում և հավաքական հայրենադարձի մեր հավատը: Թող լուսեղեն լինի նրա երկնային ճամփան:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Սկիզբը՝ 1-ին էջում

Երկիր իմ, Առանց ինձ՝ ինչպե՞ս ես... Ես հիմա շվարած ինչ-որ տեղ եմ՝ անհասցե, անտուն, անոգի... Քո ցավը ուսերիս շալակած տանում եմ (այդ ցավը տանել չի լինի), անգույն, շնչահեղձ եմ օրերս... Ապրել եմ հոգեվարքիդ ժամերն ու հայացքս կարկամած երկնքին՝ անպատասխան հեռացել եմ. Ինձից պոկելով ինձ... (Ես մնացել եմ այդտեղ՝ վայրկյանից կախ...)

Անկուշտորեն շնչել եմ անշնչացած օդը ու ջերմացել... Մի պահ... Անէացած քայլել եմ վերջին անգամ տարակուսած ու ամայացած փողոցներով ու ...

Ու խելագարված ընկել ինչ-որ տեղ... Շուրջս քառս էր... Վառողի, արյան ու բենզինի հոտը խախտել էր հավասարակշռությունը երկրի ու երկնքի միջև...

Մզլահոտ էր, ու ծուխն ամենուր էր. անհույս ճիչերն ականների պես այայթում էին ունկերիս մեջ... Թուրքը ներխուժել է երկիրս... Երկիր իմ, Քեզ ինչպե՞ս սփոփեմ, Ես ինչպե՞ս սփոփեմ... Տու՛ր ձեռքդ, Վերադառնամ...

Իմ ու քո միջև ընդամենը ճանապարհ է, երկարությունը՝ 351կմ... Ամեն օր նստում եմ մեքենան ու ուղևորվում դեպի քեզ... ... Ինձ ոչ մի տեղ չի տանում ճանապարհը... ոչ մի ճանապարհ քեզ մոտ չի բերում այլևս: Հայացքս՝ սարերին է բա՛րձր-բարձր... (գոնե նշմարեմ բարձունքներդ ու ու մնամ բարձունքում). ամեն գիշեր վերադառնում եմ քեզ մոտ, փարվում քեզ, իմ երազ, իմ պատրանք, իմ չվերջացող մղձավանջ... ճանապարհ, դու այլևս տունդարձի ճանապարհ չես, ու քո ուղևորը ես չեմ... Իմ հայացքի մեջ բերել եմ Հայրենիքս... նրա անցյալն ու ներկան իմ աչքերում է՝ որպես քարացած վկայություն... նրա ցավն իմ սրտում է՝ որպես մշտաբորբ մորմոք... Իսկ ինձ հարցնում են. Ի՞նչ եմ բերել ինձ հետ...

Անցյալներ կան, որոնք չեն անցյալվում... որովհետև արահետն ոտնահետքեր ունի պահած, ուր ամեն ծննդով երկիրը պահում է իր գեներտիկ գաղտնաբառը, ամենուր ստվերներ են ու շունչը գոյի, շշուկներն են ծառերից կախվել, օդի մեջ չի ցնդում բույրը կյանքի, (այնտեղ կյանքը կռվի համ ունի ու վառողի հոտ), պայքարը մշտաբորբոք տարերք է արյան բջիջներում... հայացքները սարերին է դաջված, ու սարերն այդ աչքերով են նայում հավերժին... հեռուն թրթռում է սրտի ամեն զարկի հետ... ու չի անցյալվում կիսատվածը....

Ես ամեն օր խնդրում եմ՝ քամին քո բույրը բերի, քամին չի բերում: Ես ամեն օր խնդրում եմ՝ ամպը քո երկինքը բերի, ամպը չի բերում: Ես ամեն օր խնդրում եմ՝ արևը քո ջերմությունը բերի, արևը չի բերում: Ես ամեն օր խնդրում եմ՝ լուսաբացը քո մաքրությունը բերի, լուսաբացը չի բերում: Ես ամեն օր խնդրում եմ՝ մայրամուտը քո անդորրը բերի, մայրամուտը չի բերում... Ինչ էլ անես՝ օրը չի քաղցրանում, Իսկ ես երկնքին չեմ էլ նայում. այնտեղ իմ երկինքը չկա...

Ուզում եմ մի քիչ կին զգալ. Լինել քնքուշ, լինել թույլ, Լինել մեղմ, սիրալիկ, Մեկ-մեկ էլ՝ սեթևեթ, Չլինել այսքան ուժեղ, Չկարծրանալ, չքարանալ, Չհեռանալ նախասկզբից... Չտանել բեռը ծանր ժամանակների... Փոխակերպմանս պատճառը դո՛ւ ես, պատերազմ...

Մի օր հասկանում ես, որ կորցրել ես կարևոր մի բան՝ ինքնությունդ, Ու որ դատարկ ես, Ու դատարկությունը չի լցվում՝ ինչ էլ անես... Իսկ ես շարունակում եմ փնտրել ինձ Երևանյան բազմադեմ փողոցներում... Տեսնողներին խնդրում եմ՝ իմաց տալ...

Անպարագիծ այս աշխարհում Քեզ եմ հռչակել իմ տիեզերքը, Միտք բառեր չեմ շնջացել երբևէ, Ոչ էլ զովքդ եմ արել, Ապրել եմ օրերդ խանդավառ Ու վառողահոտ, Ծխում կորած ավերակներիդ վրա Հառնել եմք ես ու դու Ոգեղեն շնչովդ տոգորված՝ Խիզախել եմք ամեն մարտում... Մինչ դավադրաբար քեզ ինձնից պոկելը: Իմ ժայռեղեն սեր, իմ կամաչաչյա գեղուհի, Իմ Արցախ, Թույլ տուր խոստովանեմ սերս՝ ուշացած... ... Այս ինչքա՛ն վերքոտ է սերն իմ ու չբառավորվող...

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿԱՐԱՏԵՆ ԵՎ ԳՈՏԻՆ

Կարատեն մարտարվեստի ամենաարդիական տեսակն է, որը զրավում է միլիոնավոր մարդկանց ամբողջ աշխարհում: Այս մարզաձեւում մեծ դեր ունի մարտիկի գոտին՝ օրին, որի գույնը արտացոլում է նրա վարպետության մակարդակը: Պարզաբանեմք, թե ի՞նչ գույներ գոյություն ունեն կարատեում, ի՞նչ են դրանք նշանակում, եւ ինչպե՞ս նախապատրաստվել գոտի ստանալուն:

- Ինչո՞ւ կարատեում գոտիներն ունեն տարբեր գույներ:

- Գոտու գունային տարբերակումը արեւելյան մարտարվեստների համար ավանդական տարր է: Երբ սկսնակ մարզիկը հաճախում է կարատեի պարապմունքների, նա դեռ չի ունենում ոչ մի հմտություն: Նորեկները կրում են սպիտակ գոտի՝ ի նշան մտքերի անսահմանության ու կյանքի նոր փուլի: Ժամանակի ազդեցության տակ, ինտենսիվ մարզումների, մենամարտերի ու փորձությունների ընթացքում օրին ներծծում է մարզվողի քրտինքը եւ ստանում ավելի մուգ երանգներ: Երբ մարտիկը հասնում է վարպետության բարձրագույն աստիճանի, նրա գոտին ստանում է սեւ գույն:

Իհարկե, սա պարզապես գեղեցիկ առասպել է, բայց այն լավ է բացատրում գոտու գունային տարբերակման էությունը: Անցյալում գոտու երանգներն ունեին հոգեւոր նշանակություն, իսկ մեր օրերում դա միայն մարտարվեստին տիրապետելու ամենահայտնի ցուցանիշն է: Մինչդեռ գոտու գույները չեն համընկնում մարզիկի սպորտային դասակարգման հետ, իսկ սեւ գոտին մարդուն չի դարձնում սպորտի վարպետ:

Միջազգային սպորտային մրցաշարերում գոտիների գույներն օգտագործում են միեւնույն գոտու տեր մարզիկներին խմբավորելու համար:

- Գոտու գույների նշանակությունը կարատեում:

- Պետք է նշել, որ կարատեի աշխարհում գոտիների դասակարգումը միանշանակ չէ: Գոյություն ունի գոտիների դասակարգման կանոնների մի ողջ կոմպլեքս, որը խտրակաություն է դնում քննություն հանձնողների, գոտի ստացողների միջեւ: Եթե մարտիկը զբաղվել է կարատեի որեւէ ոճով, օրինակ՝ կիոկուշինկայ կարատեով, եւ ստացել է այդ ոճում շագանակագույն գոտի, ապա դա նրան իրավունք չի տալիս կրելու այդ գոտին

շատոկան կամ այլ ոճի կարատեի ուսումնառության սկզբնական շրջանում: Այդ դեպքում նույնիսկ փորձառու կարատեիստը ստիպված կլինի ամեն ինչ սկսել մաքուր թերթից, այն է՝ սպիտակ գոտուց:

Կարատեում աստիճանը որոշվում է ոչ միայն գոտու գույնով, այլեւ՝ դասական համարներով: Վարպետության աստիճանները կոչվում են դան, իսկ ուսումնականը՝ քյու: Տաս աստիճաններից յուրաքանչյուրին համապատասխանում է իր գունավոր գոտին:



Սկսնակ մարզիկներին միշտ տալիս են սպիտակ գոտի եւ 10-րդ քյու: Վարպետությունը բարձրացնելուն զուգահեռ մարտիկը ստանում է 9-րդ, ապա 8-րդ եւ այդպես շարունակ քյու, ինչպես նաեւ՝ համապատասխան գույնի գոտի: Իսկ վարպետության աստիճանները տրվում են աճման կարգով՝ 1-ից մինչեւ 10-րդ դան:

Գոտու գույների նշանակությունը տարբեր դպրոցներում կարող է տարբեր լինել: Դիտարկենք կիոկուշինկայ կարատեի գոտիների գույները:

1 Սպիտակ գոտի: Դա կրում են առաջին պարապմունքից սկսած: Տվյալ գույնը խորհրդանշում է «մաքուր թերթ», որի վրա կարելի է «նկարել» ինչ կամենաս: Դա նաեւ մատնանշում է սովորողի անսահման ներուժը, դրա համար էլ անհարմար զգալու ոչ մի պատճառ չկա՝ այդ գոտին կապելով: Սպիտակ գոտին սովորաբար երկար չեն կրում, քանի որ համարվում է, որ արդեն իսկ առաջին պարապմունքի ժամանակ մարզիկը ներծծել է սենսեյի վարպետության մի մասը, եւ հետեւաբար, չի կարող համեմատվել լրիվությամբ «սպիտակ թերթի» հետ:

2 Նարնջագույն գոտի: Համապատասխանում է 10-րդ եւ 9-րդ քյուերին: Այս գոտին յուրացնում են սկզբնական վերապատրաստվելուց հետո: Նորեկը, որը ստացել է տվյալ գոտին, արդեն ուսումնասիրել է կարատեի հիմունքները եւ պատրաստ է ավելի լուրջ փորձությունների: Նարնջագույն գոտու տեր մարտիկը պետք է լավ կարողանա զգալ իրեն եւ իր մարմինը: Առաջին գունավոր գոտին նաեւ կարելու հոգեւոր խորհրդանիշ է, որը մատնանշում է մարզիկի բարձր ջանքերը:

3 Կապույտ գոտի: Երկնքի երանգը արեւածագի ժամանակ. կապված է 8-րդ եւ 7-րդ քյուերի հետ: Տվյալ գույնը խորհրդանշում է ջուրը: Այս գույնը կրող մարտիկը, ջրի հոսանքի պես, կարող է ուղղորդվել դեպի որեւէ հորձանուտ: Կարատեիստը, որը ստացել է կապույտ գոտի, պետք է պատրաստ լինի հարմարվելու ծանր մարզումներին եւ զգալի փոփոխելու իր ընդունակությունների կիրառման տեխնիկան: Այս փուլում մարզիկը սովորում է կառավարել իր հարվածների ուժը, ուսումնասիրում է բազմաթիվ նոր կեցվածքներ, զարգացնում է ֆիզիկական եւ մտավոր ճկունությունը:

4 Դեղին գոտի: Արեւածագի գույնը վերաբերվում է 6-րդ եւ 5-րդ քյուերին: Անցյալում քչերն էին կարող ստանալ այս գույնը: Բայց ժամանակակից կարատեի աշխարհում պատշաճ ջանքերի դեպքում կարելի է հասնել այս գոտուն մի քանի տարի պարապելուց հետո: Դեղին գոտին խորհրդանշում է գիտելիքը: Դա ստանալու համար մարզիկները հասցնում են իրենց հարվածները իդեալական հստակության եւ ավտոմատիզմի: Դեղին գույնը նշանակում է նաեւ կրակ, այսինքն՝ հոգեւոր հզորության դրսեւորում եւ մեծ կամքի ուժի ցուցաբերում:

5 Կանաչ գոտի: Նորափթիթ տերեւի երանգը տրվում է 4-րդ եւ 3-րդ քյուերով մարզիկներին: Այս գոտուն արժանանալու համար մարզիկը պետք է կարողանա պահպանել լիարժեք հանգստություն մենամարտի ժամանակ, ինչպես նաեւ արագ փոխել մարտավարությունը եւ վերահսկել իրադ-

րությունը: Նա պարտավոր է գիտակցել իր թույլ կողմերը, հատկապես հուզական ոլորտում, քանի որ հույզերը կարող են լրջորեն ազդել մրցման արդյունքի վրա:

6 Շագանակագույն գոտի: Հասունության գույնը կապված է 2-րդ եւ 1-ին քյուերի հետ: Չնայած, որ դա ուսումնական աստիճան է, բայց բոլոր մարզիկները չէ, որ կարողանում են դրան հասնել: Շագանակագույն գոտու արժանանալու համար կարելու է զարգացնել ստեղծագործական մոտեցումը մենամարտին: Այս փուլում յուրաքանչյուր մարտիկ ձգտում է մշակել իր ուրույն մարտական տեխնիկան, որն արտահայտում է նրա բնավորությունն ու անհատական նպատակները:

7 Սեւ գոտի: Իմաստության եւ վարպետության գույն: Այն մարզիկները, որոնց հասնում է այս գույնը, անցնում են նոր փուլ, որում նրանց արդեն տրվելու է դան, ոչ թե քյու: Ամենամուգ գոտին խորհրդանշում է վարպետության բարձր աստիճանը, մարտիկի ինքնուրույնությունն ու հասունությունը: Դրան հասնելու համար կարատեիստից պահանջվում է ինքնավերլուծություն, ինքնադիտարկում եւ ինքնաքննադատություն:

Սեւ գոտին միշտ անհատական է, այն ուղարկվում է ճապոնիայից: Գոտու վրա հիերոգլիֆներով ասեղնագործվում է դրա տիրոջ անունը: Գոտուն կից տրվում է նաեւ համապատասխան վկայական:

- Ինչպե՞ս նախապատրաստվել փորձությունների միջով անցնելուն գոտի ստանալու համար:

- Գոտի ստանալու համար կարատեիստները ստիպված են շատ աշխատել: Պետք է սովորել տվյալ աստիճանին համապատասխանող կեցվածքները, հարվածներն ու պաշտպանությունը, ինչպես նաեւ անցնել ֆիզիկական թեստ: Տարին երկու անգամ գոտու քննություն հանձնելու հնարավորություն կա: Այդ փորձությունները կազմակերպվում են մարզական ակումբներում, դրա համար էլ գոտի ստանալու համար պետք չէ մասնակցել մրցաշարերի: Ավելի լավ հասկանալու համար, թե ինչ հմտություններ է պետք զարգացնել եւ ինչ սպասել քյու-թեսթից, պետք է դիմել մարզչին:

Նկարում՝ կիոկուշինկայ կարատեի արցախցի մարզիկներն են՝ մարզիչ Արմեն Պետրոսյանի ղիխավորությամբ:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Արցախի բանախոսություն

Սկիզբը՝ Նախորդ համարներում

330. Հազար մանեթ պարտքս ինի, մըրթըմաչի մարթըս ինի: Հազար մանեթ պարտքս ինի, մարդամեջի մարդս ինի:

331. Տու ինձ պահե բոխճինաչի, ես քեզ պահիմ մարթամաչի (շորը): Դու ինձ պահիր բոխչի մեջ, ես քեզ պահեմ մարդամեջում /շորը/:

332. Համ շանան ա, համ՝ տանան: Համ շնից է, համ տնից:

333. Մեդր ծախողը, մանները լյուզ կտա: Մեդր ծախողը մատները կլիզի:

334. Հինչու վեր փըթիս, էն էլ տյուս կըտա: Ինչ բրդես, այն դուրս կհանես:

335. Շանա շատըն, կյուլա՝ խրեզ : Շնից շատ են, գայլից՝ քիչ:

336. Մոկնեն կյուզը Քյուռեն էլա օքուք: Մկան շեռը Քուռին էլ է օգուտ:

337. Սարերը ըրուտալին տեղ, քարերն ըն ըրոտում: Սարերը որոտալու փոխարեն քարերն են որոտում:

338. Ճորուն պիիրը վեր տյուս կյա, ուրան քմակեն մի կըկյա: Ճորու բիիրը որ դուրս գա, քմակին կդիպչի:

339. Հացը դուշմանին տոռնը կըտանե: Հացը թշնամու դուռը կտանի:

340. Շոնը շանը մըեսը կոտե, վըեսկեռը թող չանիլ: Շուներ շան միսը կուտի, ոսկորը թող չի անի:

341. Քառը սկանալ չի, կընըմընցնե: Քառը չի լսի, կմամաղցնի:

342. Վախե ճըղարան ու լըղարան: Վախեցիր կապտականաչագույն աչքերով և

լղար մարդուց:

343. Վախե են կյետան, վըեր վըեչ վշշամ ա, վըեչ թըշշամ: Վախեցիր այն գետից, որը ոչ վշշում է, ոչ թշշում:

344. Ախպերը ախպորը մեռնելը օգիլ չի, ամնա փիս ապրելը կոզի: Եղբայրը եղբոր մահանալը չի ուզենա, բայց վատ ապրելը կուզի:

345. Ընցած օրերեն պեն չի հըսնել: Անցած օրվան բան չի հասնի:

346. Էն վաղ ար, վըեր էշը կաղ ար: Էն վաղ էր, որ էշը կաղ էր/այսինքն՝ անցած բաներ են/:

347. Մոտե հըրևանը հեռե պարիկաման լյավա: Մոտիկ հարևանը հեռու բարեկամից լավ է:

348. Քյոհնա տըրեմանը քամուն չըն տալ:

Հին դարմանը քամուն չեն տա:

349. Պըելեն կըլոխ տընողն ա պել: Գժիկ

զլուխ դնողն է գիժ:

350. Ուրուշու հետե փոս կըտորողը ինքը կըղեն մաչը: Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի մեջը:

351. Ճուրն ուրան տըրդավը կըքյինի: Ճուրն իր տեղով կզնա:

352. Սաբաբ տըռնողը քյաբաբ կըտեռնա: Միջնորդ դառնողը քյաբաբ կդառնա:

353. Տղամարթ ում, խոսկես տարն ում: Տղամարդ են, խոսքիս տերն են:

Շարունակելի

Ադելա/Արշալույս/ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՌԱՐԱՐ ԽՍՐԱԳԻՐ՝ Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ	Հիմնադիր՝ «Լուսարար» կրթամշա- կութային ՀԿ	✉ ք.Երևան, Անտառային փ. 188/16 ☎ 097-22-38-27 E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info	Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Թերթը վաճառքի ենթակա չէ:	Տպագրվում է «Լիմուշ» ՍՊԸ տպարանում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Տպաքանակ՝ 500 Ստորագրված է տպագրության՝ 28.07.2025թ.:
--	--	--	--	--